Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող ***Արցախի Էլեկտրոնային Գրադարանի*** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:

Уважаемый читатель!

На сайте ***Электронной библиотеки Арцаха***, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха** (ОМУСА), размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - ***Artsakh E-Library*** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: http://artsakhlib.am/
E-mail: info@artsakhlib.am
Facebook: https://www.facebook.com/www.artsakhlib.am/
ВКонтакте: https://vk.com/artsakhelibrary
Twitter: https://twitter.com/ArtsakhELibrary

ԱԼԲԵՐՏ-ՀԱՅՐԻԿ ՂԱԶԱՐՅԱՆ

ՀԻՍՈՒՆ ՕՐ ԱՐՑԱԽՈՒՄ







ԱԼԲԵՐՏ-ՀԱՅՐԻԿ ՂԱԶԱՐՅԱՆ

ՀԻՍՈՒՆ ՕՐ ԱՐՑԱԽՈՒՄ

ՀԲՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ — 1994

ԳՄԴ 84Հ7—44
Ղ 301
Ն 84Հ / Ղ 301

Ղազարյան Ալբերտ
Ղ 301 50 օր Արցախում: Ակնարկներ և բանաստեղծություններ: Եր.: ՀԲՀ հրատ., 1994 թ., 64 էջ +16 ներդիր:

Ղ 4702080201 / 808(02)-94 ԳՄԴ 84Հ7—44

ISBN 5—8079—0808—2

© Ալբերտ Ղազարյան, 1994

№ 6319

1993 թ. փետրվարի 23-ին մեր կամավորական գումարտակը մեկնեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն՝ մասնակցելու նրա ինքնապաշտպանությանը:

Վաղ առավոտ էր, բայց արդեն սկսվել էր զինվորների եռուզեռը: Բոլորին մի անհանգիստ մտահոգություն էր պաշարել:

Ցուրտ էր, փետրվարյան սառնամանիք: Սենյակներում ոչ էլեկտրականություն կար, ոչ ջեռուցում, բայց դա կարծես ոչ մեկին չէր հուզում, բոլորը գիտակցում էին պահի լրջությունը:

Ժամը 10-ին լսվեց գումարտակի հրամանատար կապիտան Ռոկան Հրանտի Գյուլումյանի ձայնը: Ինձ էր փնտրում: Նրա կարգադրությամբ բոլոր հրամանատարներին հրավիրեցի խորհրդակցության: Նա մեզ կարճ հաղորդագրություն տվեց երթուղի դուրս գալու մասին: Հրամանատարն ինձ հանձնարարեց մեկ անգամ ևս ստուգել անձնակազմի ամբողջականությունն ու պատրաստակամությունը:

Եղանակը քիչ-քիչ պարզվում էր: Զորանոցի հրապարակը լեփ-լեցուն էր կամավորներով և նրանց հարազատներով, որոնք եկել էին ճանապարհելու իրենց զավակներին:

Փետրվարյան այդ ցրտաշունչ օրը դեռ երկար կմնա նրանց հուշերում: Նրանցից շատերը վերջին անգամ էին գալիս ճանապարհում իրենց որդիներին:

Ժամը 12-ին գումարտակը պատրաստ էր շարային ստուգատեսին: Լսվեց կապիտան Աղասի Վարդերեսյանի հմայիչ ու խրոխտ ձայնը. «Շարվի՛ր: Զգա՛ստ: Հավասարությունը դեպի աջ»: Զինվորականին հատուկ քայլվածքով նա մոտեցավ աջ կողմում կանգնած գեներալներ Մարտիրոսյանին, Հարությունյանին և բրիգադի հրամանատար գնդապետ Մարդանյանին: Զեկույցից հետո վերջիններս ողջունեցին զինվորներին և սպաներին:

«Մեսրոպ Մաշտոց Համալսարան» ... Co.LTD
№ 10786
«07» 11 2018 թ.

Ճառով հանդես եկավ գնդապետ Ռ. Մարդանյանը: Դիմելով զինվորներին նա ասաց.

— Ձեր զորությամբ պետք է ազատագրվեն թշնամու կողմից գրավված մեր գյուղերն ու քաղաքները: Եղեք ձեր նախնիների սուրբ ու արդար գործի շարունակողները: Դարեր շարունակ մեր ժողովրդին հալածել ու կողոպտել են թաթարներն ու մոնղոլները և թուրք բարբարոսները, բայց մեր նախնիները երբեք չեն ընկճվել ու անառիկ պահել մեր հայրենիքը: Այսօր մենք իրավունք չունենք մեզ բաժին հասած ժառանգությունը հեշտությամբ զիջել թշնամուն:

20-րդ դարի սկզբներին ենիչերիներն ուզում էին աշխարհի երեսից վերացնել մեր ժողովրդին, սակայն բախվելով հայ կամավորական ջոկատների հուժկու հակահարվածներին՝ դուրս շպրտվեցին Բաշ Ապարանից, Սարդարապատից, և հայրենիքն ազատագրվեց թշնամու ոտնձգություններից:

Այսօր մեր ձեռքում է հայրենիքի պաշտպանությունը: Դուք պետք է շարունակեք ձեր պապերի գործը: Արդար է մեր պահանջը և մենք կմարտնչենք մինչև հաղթանակ:

Ի համաձայնություն գնդապետի խոսքերին՝ զինվորները իրենց զենքերն էին թափահարում, նրանց սրտերում բոցավառվում էր հաղթանակի տենչը:

Արարողությունից հետո Ա. Վարդերեսյանը հրամայեց նստել ավտոբուսները:

Տղաների ցանկությամբ ես նստեցի զինվորներից մեկի՝ Ռուբիկ Խաչատրյանի մեքենան:

Մասիսից Եղեգնաձոր ձգվող ճանապարհը շատ տխուր էր. տղաները դեռ մտքով իրենց հարազատների հետ էին, հիշում էին բարեմաղթանքի վերջին խոսքերը: Իսկ շուրջը կտրտված ծառեր ու հեռագրասյուներ, տեղ-տեղ կանաչին տվող դաշտեր, որոնց հետևում նշմարվում էին մառախլապատ լեռները:

Ռուբիկի առաջարկությամբ որոշեցինք մոտակա ճաշարանի մոտ սպասել ավտոշարասյանը:

Նոր էինք իջել մեքենայից, երբ Կիրովականի կամավորական գումարտակի զինվորներից մեկը մեզ հայտնեց, որ իրենց ջոկատին պատծանր վիճակում տեղափոխել են շրջկենտրոնի հիվանդանոց: Անմիջապես մեկնեցինք այնտեղ և տեղեկացանք, որ վարորդ Դավթի կյանքին վտանգ չի սպառնում:

Ժամը 21.40-ին հիվանդանոցից դուրս եկանք: Ջերմուկի կամավորական վաշտի հրամանատար Մուշեղ (Համո) Բաբայանի առաջարկությամբ մտանք մոտակա խորտկարանը ընթրելու: Այնտեղ մեզ մոտեցան երկու երիտասարդ՝ Աշոտը և Ռոբերտը: Նրանք խնդրում էին, որ իրենց էլ մեզ հետ վերցնենք: Երբեք չեմ մոռանա նրանց կրակոտ աչքերը, Արցախի պաշտպանության համար կռվելու բուռն ցանկությունը: Բայց ոչինչ չէինք կարող անել, որովհետև ընդամենը 17 տարեկան էին և մարտական պատրաստվածություն չունեին:

Սեղանի շուրջը նստած էին մոտ տասը երիտասարդներ: Նրանցից մեկը մոտեցավ մեզ և ասաց, որ նորածին որդու ծնունդն են նշում: Հետո կատակով ավելացրեց, որ նորածնին էլ մեզ հետ տանենք: Փոքրիկի հայր՝ Հակոբը ոտքից վիրավոր էր: Նա էլ էր ֆիդայի, մասնակցել էր ինքնապաշտպանական մարտերին:

Արդեն ուշ էր և մենք հրաժեշտ տվեցինք տղաներին, իսկ նրանք մեզ բարի ճանապարհ և բարի վերադարձ մաղթեցին:

Ժամը 23.30-ին միացանք մեր ավտոշարասյանը և շարժվեցինք Գորիսի ուղղությամբ:

Տեղ գյուղում մի փոքր հանգիստ առանք և 24.45-ին բռնեցինք Լաչինի միջանցք տանող ճանապարհը: Թեև այն շատ վտանգավոր էր, բայց պետք էր անցնել:

Բարեհաջող հասանք Լաչին գյուղաքաղաքը: Այստեղ պետք է գիշերեինք, իսկ առավոտյան ճանապարհը շարունակեինք դեպի Լիսագոր, Շուշի, ապա Ստեփանակերտ:

Առաջին անգամն էի լինում այդ հրաշալի երկրում: Ճանապարհին տղաները պատմում էին իրենց հետ պատահած դեպքերից, Շուշի քաղաքի գրավումից, որի ժամանակ զոհվել ու անմահացել էին իրենց ընկերները:

Տխուր էր Ստեփանակերտը: Տխուր էին նաև բնակիչները: Պատերազմ էր: Ամենուր քանդված շենքեր, ավերված փողոցներ, վիրավոր զինվորներ, հոգնատանջ դեմքեր: Մի կին երեխային գրկած դես ու դեն էր վազում, օգնություն խնդրում: Սիրտս ճմլվում էր օգնություն աղերսող մորը նայելիս: Երեխային անմիջապես տեղափոխեցինք հիվանդանոց: Թշնամու արկի բեկորը վիրավորել էր նրան:

Դա իմ առաջին օգնությունն էր Արցախի բարեկամներիս:

Հետադարձին ականատես եղանք մի ազատամարտիկի հուղարկավորությանը: Դագաղի կողքից գլխիկոր քայլում էին ընկերները: Մոտեցա: Նրանք պատմում էին երիտասարդ Արտակի սիրանքների մասին:

Գնալով մեջս ավելի ու ավելի էր խորանում ցասումը դաժան թշնամու հանդեպ: Ծանր խոհերով բաժանվեցի անծանոթ ընկերոջից և մենք հրաժեշտ տվեցինք Ստեփանակերտին:

1993 թվականի փետրվարի 25-ին Ստեփանակերտից մեկնեցինք Առաջաձոր գյուղը և տեղավորվեցինք միջնակարգ դպրոցի շենքում:

Պատերազմի արհավիրքներից գյուղը գրեթե դատարկվել էր: Արկերի պայթյուններից քանդվել էին տները, տապալվել ծառերը: Ամենուրեք երևում էր ոճրագործ թշնամու սև ձեռագիրը: Չնայած այդ ամենին տեղացիներից դեռ մնում էին գյուղում:

Դպրոցը, ուր իջևանել էինք, երկհարկանի շենք էր՝ երկու կողմից շրջապատված անտառապատ լեռներով:

Առաջին օրերն էին, առաջին տպավորությունները, թեև ծանր. բայց... Առաջին անգամ լսեցի հեռվից եկող արկի սվվոցը, որն ընկավ մեզանից քիչ հեռու...

Տղաները խիստ հոգնած էին և պառկեցին հանգստանալու, իսկ դրսում հորդառատ անձրև էր գալիս:

Հրամանատար Գյուլումյանն ինձ հանձնարարեց 2-րդ և 3-րդ վաշտերի ազատամարտիկներին պատրաստել Դրմբոն գյուղ մեկնելու, որպեսզի մասնակցեին Սարսանգի ջրամբարի համար մղվող մարտերին: Հաջորդ օրը պետք է մեկներ ամբողջ գումարտակը:

Այդ գիշեր ինձ համար տեղի ունեցավ անսպասելին՝ շենքի առաջին հարկից ավտոմատ զենքի կրակոց լսեցի: Կամավորական 3-րդ չտալ»: Անմիջապես հագնվեցի և իջա առաջին հարկ: Միքայելյանը զեկուցեց, որ զինվորներից մեկը՝ Արա Մարտիրոսյանը ընկերների վրա կրակելու փորձ է արել: Պարզվեց, որ հոգեկան հիվանդ է: Նրան մենք հանձնեցինք զինվորական ոստիկանությանը, որոնք նրան տարան հոգեբուժական հիվանդանոց:

Փետրվարի 27-ին հրամանատար Մարդանյանը հրամայեց մնացած ազատամարտիկներին Դրմբոն ուղարկել:

Այդ օրը ժամը 1-ին մենք դուրս եկանք Առաջաձոր գյուղից: Ճանապարհին անցանք Չլդրան, Պողոսագոմեր գյուղերի միջով ուր այլևս բնակիչներ չկային:

Դրմբոն գյուղում մեր շտաբը տեղավորվեց մի բնակարանում: Նույն օրը վաթսուն հոգանոց ազատամարտիկների մի խումբ կազմվեց Սարսանգի ջրամբար հերթափոխության ուղարկելու համար: Սակայն լուրեր հասան, որ 2-րդ և 3-րդ վաշտերի տղաները ընկել են շրջապատման մեջ, կան զոհեր և վիրավորներ:

Նշված փաստն ստուգելու համար եկա Դրմբոն գյուղում գտնվող Մարտակերտի պաշտպանության շտաբ: Այնտեղ հայտնեցին, որ փետրվարի 25-ի լույս 26-ի գիշերը մեր տղաները թշնամու հետ մարտի են բռնվել ու ընկել շրջապատման մեջ: Համառ մարտերից հետո նրանք դուրս են եկել շրջապատումից, սակայն մարտադաշտում մնացել էին զոհված ու վիրավոր ընկերները: Գիշերը տղաները թաքնվել էին անտառում, իսկ առավոտյան Հենրիկ Հովհաննիսյանի ղեկավարությամբ նոր գրոհ էր կազմակերպվել՝ զոհերին և վիրավորներին դուրս բերելու և հանձնված ջրամբարը հետ վերցնելու համար: Այդ հարձակումը բարեհաջող էր ավարտվել:

Բոլորիս համար շատ ծանր օրեր էին:

Դրմբոն գյուղից դեպի Սարսանգի ջրամբար տանող ճանապարհով անցնելիս, հատուկ հանձնարարություն կատարելու ժամանակ ականի արկի պայթյունից զոհվեց առաջին վաշտի զինվոր Կարեն Երեմի Ասատրյանը:

Սարսանգի ջրամբարի համար մղված մարտերում զոհվեց 1992 թվականից Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտակերտի շրջանի Դրմբոն, Վաղուհաս, Գետավան, Հաթերք, Չափառ գյուղերի ազատագրմանը մասնակցած, 1993 թ. փետրվարից կամավոր ազգային բանակին զինվորագրված 2-րդ վաշտի առաջին դասակի հրամանատար ավագ լեյտենանտ Համլետ Կոմիտասի Շառոյանը (ծնվել է 1950 թ. Երևանում, ստացել տնտեսագիտական բարձրագույն կրթություն):

Նույն դաժան ճակատագրին արժանացան՝ Մարտակերտի վերոհիշյալ գյուղերի ազատագրման համար 1992 թվականից մարտերին մասնակցած, իսկ 1993 թվականի փետրվար ամսից կամավոր ազգային բանակը համալրած 1964 թվականին ծնված Հրաչ Հրանտի Սահրադյանը, Երևան քաղաքի բնակիչներ, 1967 թ. ծնված Հարությունն Վոլոդյայի Դավթյանը, 1971 թ. ծնված Կարեն Օնիկի Խաչատրյանը, Յուրա Արմենակի Միքայելյանը, 1966 թ. ծնված Հրայր Անդրանիկի Ղազարյանը:

Այդ նրանք էին, որ Սարսանգի ջրամբարի համար մղվող մարտերում անձնազոհությամբ պաշտպանեցին այն և ճանապարհ հարթեցին դեպի Կուսապարի բարձունքները:

Վերոհիշյալ մարտերում անհայտ կորան Աշոտ Սարգսի Ռաֆայելյանը և Լյովա Պատվականի Վիրաբյանը:

Հետ վերցնելով ջրամբարը, զինվորները հայտնաբերեցին չորս տարի պատերազմի դառն փորձություններով անցած, երկու զավակ-

ների մայր, «Ծուշիի աղվես» մականունով, նախկինում «Աղբյուր Սերոբ» ջոկատի անդամ, Լաչինի միջանցքի համար մղված մարտերի և Ծուշիի գրավման ակտիվ մասնակից, Երևան քաղաքի բնակչուհի 23-ամյա Նաիրա Վազգենի Սահակյանի դիակը:

Նաիրայի մասին զինվորները լեգենդներ էին պատմում: Նա եղել էր դիպուկ հրաձիգ, կարողացել էր ճարպկորեն անցնել և հետախուզել թշնամու թիկունքը:

Զոհվեց Նաիրան Սարսանգի մարտում,
Որ հայ երեխան ապրի աշխարհում,
Գլուխը բարձր քայլի միշտ կյանքում,
Ու միշտ վեհ պահի սերը մայրական:

Լեգենդներ էին պատմում շեկլիկի մասին,
Նրան կոչում էին Ծուշիի աղվես,
Առաջինն էր միշտ գնացել մարտի,
Եվ հաղթանակել շատ ու շատ անգամ:

Ընկավ Նաիրան թշնամու զարկից,
Իր հետ զոհվեցին յոթ քաջազուններ,
Այդ չարաբաստիկ փետրվար ամսին,
Սև դրոշ կախվեց շտաբի շենքին:

Կանգնած էինք մենք նրանց հանդիման,
Աչքերս հառած նրանց դեմքերին,
Ամենքս էլ մտովի երդում տվեցինք,
Վրեժը լուծել անսանձ թշնամուց:

Մարտերի ժամանակ իր անվեհեր խիզախությամբ աչքի է ընկել նաև Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Զարդախաչ գյուղի նախկին բնակիչ Կամո Գրիշայի Ծատուրյանը՝ ծնված 1962 թ.: 1992 թվականից մասնակցել է Զափար, Գետավան, Զարդախաչ, Աղդաբատ գյուղերի պաշտպանությանը, 1993 թվականից զինվորագրվել ազգային կամավորական բանակին: Սարսանգի ջրամբարի համար մղվող մարտերի ժամանակ ոտքից վիրավոր Կամոն գրավել է թշնամու տանկը և առաջին անգամ վերջինիս ղեկին նստելով դուրս բերել մարտադաշտից: Օգնել է նաև վիրավոր Արմեն Ժորայի Սարգսյանին, Վիտալի Վասիլի Լիսանովին և Էդիկ Լևոնի Թադևոսյանին: Ընկերներին օգնելուց հետո էլ նա մինչև վերջին վայրկյանը չի թողել մարտադաշտը: Բարձր գնահատելով Կամոյի սխրանքը, հրամանատարությունը հետագայում նրան շնորհեց լեյտենանտի կոչում և վստահեց վաշտի հրամանատարի պաշտոնը:

Սարսանգի ջրամբարի մատույցներից թշնամուն հակահարված տալու և այնտեղից ետ շպրտելու համար հրամանատարությունը որոշեց օգնության ուղարկել չորս տարիների մարտական փորձ ունեցող, Ջերմուկի կամավորական վաշտի հրամանատար ավագ լեյտենանտ Մուշեղ (Համո) Վահագնի Բաբայանին:

Փորձառու հրամանատարն իր քաջարի քսան մարտիկների հետ ստիպեց թշնամուն փախչելու ճանապարհը բռնել մինչև Կուսապատի բարձունքները և լիովին ազատագրեց Սարսանգի ջրամբարը: Թևից ու կրծքից վիրավորված Համոյին տեղափոխեցին հիվանդանոց: Մարտերի ժամանակ զոհվեց ազնիվ հայրենասեր Արթուր Սիրիդոնի Մաթևոսյանը, վիրավորվեց Կարեն Սպարիկի Բաբայանը:

Կուսապարի բարձունքներն սկսեցին հսկել նրանց գործը շարունակող գումարտակի մյուս ազատամարտիկները:

1993 թվականի փետրվարի 28-ի գիշերը խրամատներն ու պահակակետերը ստուգելու ժամանակ Կուսապատի բարձունքներում թշնամու հանկարծակի հարձակումից հերոսաբար ընկան չորս տարի մարտերին մասնակցած, գումարտակի շտաբի պետ կապիտան Աղասի Ավետիսի Վարդերեսյանը, 3-րդ վաշտի 2-րդ դասակի հրամանատար ավագ լեյտենանտ Հայկազ Միքայելի Դանիելյանը, ազատամարտիկներ՝ Արթուր Հրաչի Ղազարյանը, Գառնիկ Շմավոնի Աբրահամյանը:

Խրամատում նստած էինք,
Ու երգում էինք հին-հին երգեր,
Հետախույզը սև բոթ բերեց,
Որ զոհվել է Աղասը մեր:

Կուսապարի բարձունքներում
Աղասն ընկավ, էլ հետ չեկավ,
Անմահացավ ու սրբացավ
Կուսապարի բարձունքներում:

Խոսք եմ տվել քո տունը գալ,
Երբ որ գիրքս լույս ընծայեմ,
Քո սենյակում մոմեր վառեմ,
Երգս էլ թողնեմ զավակներիդ որսյես նվեր:

1990 թվականի մայիսի 11-ին շքերթ-տոնահանդես էր: Անցնում էին սասունցիների, ճոդեհականների, անդրանիկյանների, զեյթունցիների, վահագնորդաց մանկական և այլ զորագնդեր, որոնք մինչ ի մահ հայրենիքին հավատարիմ մնալու երդում էին տալիս:

Ծքերթն ընդունում էր նորօրյա ֆիդայի ավագ լեյտենանտ Հայկազ քեռին:

Ավագ լեյտենանտ Հայկազ Դանիելյանը 1990—91 թթ. մասնակցել էր Գորիսի, Նոյեմբերյանի շրջանների ինքնապաշտպանությանը, քինտակ և Բերդաձոր գյուղերում տեղի ունեցած մարտերին: Հայկազն այն մարտիկներից էր, որոնք 1989 թ. մասնակցել էին «Հայկ—1» փոքր ձեռնարկությունում զենքի արտադրությանը:

Հիշում եմ նրա հետ իմ ունեցած առաջին զրույցը, որը մեր մեծ բարեկամության հիմքը դրեց: Իմ առաջարկությամբ Հայկազին դասակի հրամանատարի պաշտոն վստահվեց: Հունիս ամսին Դանիելյանի ծննդավայրում՝ Աշտարակի շրջանի Ոսկեվազ գյուղում տեղի ունեցավ հանդիպում, որին մասնակցում էի նաև ես:

Գյուղացիներն ինձ Հայկազի անցած մարտական ուղու մասին շատ հարցեր էին տալիս: Նրանք իրենց ծոցից ծնված զինվորին անմահացնելու համար առաջարկեցին գյուղի փողոցներից մեկը վերանվանել Հայկազ Դանիելյանի անունով:

Ես սրբազան մասունքի պես պահում եմ Հայկազի «Պաշտպան կանգնենք մենք մեր ազգին» բանաստեղծությունը, որը փակցված էր զորանոցի միջանցքի պատին: Բանաստեղծությունը շատ ոգեշունչ է և գրված է հայրենասիրական պաթոսով:

Հայկազը եղել է ու ընդմիշտ կմնա գալիք սերունդների հիշողության մեջ:

Աղասի Վարդերեսյանը մեծ սիրով էր կապված 2-րդ վաշտի 2-րդ դասակի հրամանատար ավագ լեյտենանտ Նորայր Ռուբենի Կարապետյանի հետ: Նա 1992 թ. մասնակցել էր ԼՂՀ պաշտպանությանը, եղել Ասկերանի շրջանի գումարտակի հրամանատարի առաջին տեղակալը: Նորայրը զոհվեց Սարսանգի ջրամբարի մարտերի ժամանակ 1993 թ. փետրվարի 26-ին:

Երքաղխորհուրդը բարձր գնահատեց մեծ հայրենասերի անցած մարտական ուղին և 1993 թ. հունիսին Երևանի մանկական երկաթգծի պուրակը վերակոչեց նրա անունով:

Վերջիններիս հետ զոհվեցին նաև քաջարի ազատամարտիկներ, Ա. Վարդերեսյանի համագյուղացի Գառնիկ Շմավոնի Աբրահամյանը (ծնվ. 1947 թ. Վրացական Հանրապետության Ախալքալաքի շրջանի Կարզախ գյուղում), Արթուր Հրաչի Ղազարյանը (ծնվ. 1962 թ. Քաջարանում): Վերջինս ծնողների միակ զավակն էր: Ավարտել էր Երևանի թիվ 146 դպրոցը, այնուհետև աշխատանքի անցել ալյումինի գործարանում: 1981—83 թթ. զորակոչվել էր նախկին խորհրդային բանակ: Ծառայությունն ավարտելուց հետո աշխատել էր նույն ինստիտուտի ռադիոսարքավորումների ամբիոնում: Ապագա գիտնականը ռազմի դաշտ էր մեկնել և այնտեղ կնքել իր մահկանացուն: Ռազմիկը հավերժ կմնա մեր ժողովրդի հիշողության մեջ:

Արթուրի մասին գրվեցին բազմաթիվ բանաստեղծություններ: Ինձ է հասել Կարապետ Մամբրեյանի ստորագրությամբ բանաստեղծությունը.

Արդեն կլոր հինգ տարի է
Ինչ մարտերն են թեժանում.
Արդեն կլոր հինգ տարի է,
Որ հերոսներն են զոհվում:
Արդեն կլոր հինգ տարի է,
Ինչ որդիքն են որբանում,
Իսկ շատերի երազներում
Դեռ գարուններ էին սպասում:
Նրանցից էր քաջ Արթուրը,
Որն իննօրյա մարտերից
Ընկավ որպես քաջ բազե:
Մահվան բոթը չգիտես ոնց
Հայտնեն նրա ծնողին,
Իսկ քույրերը կորցրել են
Իրենց արդեն լիովին:
Չեն հաշտվում այն մտքի հետ.
Երեսուն մեկ տարեկան
Քաջ մարտիկը գնա ճակատ
Եվ այլևս հետ չգա:
Միանգամայն էր Արթուրը քաջ,
Մեր սրտերում նա հավերժ
Անմահացավ, հերոս դարձավ,
Նա միշտ կապրի, առհավետ:

Դեռ շատ կգրվի անմահ զինվորների մասին, որոնք իրենց կյանքը նվիրեցին հայրենիքի ու ազգի պաշտպանության սուրբ գործին:

Նույն օրը Արթուրի հետ կողք կողքի կռվում էր ակադեմիական դասակի հրամանատար Կարո (Մորուք) Ռուբենի Կիրակոսյանը: Նա վիրավորվելուց հետո էլ շարունակեց ծառայությունը: Կարոն էլ 1992 թվականից եղել էր ինչպես Հայաստանի սահմանամերձ շրջաններում, այնպես էլ Արցախում: Փորձված հրամանատարը միշտ առաջին գծում էր և երդվել էր, որ մինչև հաղթանակ պետք է պայքարի:

Սարսանգի ջրամբարի համար մղված մարտերում վիրավորվեցին

հայրենիքի նվիրյալ մարտիկներ, հրամանատար լեյտենանտ Խաչիկ Շահենի Գասպարյանը:

Խաչիկը չորս տարի եղել էր Արցախում, կազմել ջոկատներ ու մասնակցել նրա ազատագրմանը:

Նրա անցած հերոսական ուղու մասին գովեստով էին պատմում բոլորը: Լսում էի Խաչիկին ու հուզվում: Վիրավորվելուց հետո նրան չէր թույլատրվում մասնակցել մարտերին: Թեև ֆիզիկապես բաժանվեց իր մարտական ընկերներից, բայց համոզված եմ, որ հոգեպես մարտադաշտում է և ոգեշնչում է իր զինվորներին՝ հայրենիքի լեռներն ու սարերը անառիկ պահելու համար:

Խաչիկի մասին շատ բան իմացա,
Թե նա ինչպես է կռվել մարտերում
Կազմել ջոկատներ, դարձել բարեկամ
Քարայրում ապրող արծիվների հետ:

Սարսանգի ջրամբարի ահեղ մարտերում
Արծիվը ծանր վերքեր ստացավ,
Բայց բժիշկների հոգատար ձեռքով
Խաչիկը դարձյալ նոր կյանք ստացավ:

Սարսանգի ջրամբարի մարտերի ժամանակ վիրավորվեցին կամավորներ Միքայել Արշալույսի Տոնոյանը, Բենիկ Հարությունի Հարությունյանը, որը գրկվել էր ոտքից, ակադեմիական դասակի զինվոր Ժորա Բենիկի Մուրադյանը:

Փետրվարի 28-ին վիրավորվեցին խիզախ կապավորներ Արարատ Ժորայի Այվազյանը, Կարեն Համլետի Մարտիրոսյանը, Սամվել Սամսոնի Վարակյանը, Ալիկ Գվիդոնի Հովհաննիսյանը, Արմեն Ժորայի Սարգսյանը, Միշա Հարությունի Պետրոսյանը, Հայկասար Արմենակի Պապյանը, Լիպարիտ Մկրտչի Ստեփանյանը: Վերջինս մահացու վերքեր ստանալուց հետո իր մահկանացուն կնքեց Երևանի Հանրապետական հիվանդանոցում:

Լիպարիտը ծնվել էր Գյումրիում 1932 թվականին: Վաղ մանկուց զրկվել էր ծնողներից, ուներ երկու երեխա: Մի անգամ հարցրի, թե այդ տարիքում ի՞նչն է նրան ստիպում կռվել: Իսկ նա առանց մի վայրկյան վարանելու պատասխանեց, որ հայրենիքի կանչն է իրեն այստեղ բերել: Ասում էր, որ թշնամուն թույլ չի տա անարգել իր կնոջն ու զավակներին, չի հանդուրժի, որ Երևանում էլ կատարվի այն, ինչ եղավ Սումգայիթում ու Բաքվում: Լիպարիտը համոզված էր, որ միայն կռվով կարելի է ազատության հասնել, գերադասում էր փառքով մեռնել, քան ծնկաչոք ապրել:

Սարսանգի ջրամբարի մոտ վիրավորվեցին նաև Մինաս Սուրենի Գևորգյանը, Ապետ Մարտիրոսի Աղաբաբյանը (ծնվ. 1957 թ. Արարատի շրջան): Ապետին գտանք մարտից հինգ օր հետո միայն: Ոտքից վիրավորվել էր, պատառոտել հագուստները, կապել վերքը: Դիմացել էր քաղցին ու ծարավին: Երկար փնտրելուց հետո գտանք ծառի տակ արյունաքամ ընկած: Հոգատար բժիշկների շնորհիվ Ապետն ասես երկրորդ կյանք ստացավ, թեև մի ոտքից զրկվեց:

Ազատամարտիկների արյամբ ներկվեցին Սարսանգի ջրամբարի ջրերը, հողն ու կանաչը: Ամեն մի հաջողություն ձեռք էր բերվում մարդկանց կյանքի գնով: Փորձեցինք գտնել նաև անհայտ կորածներ Աշոտ Ռաֆայելյանին և Լյովա Վիրաբյանին, բայց ապարդյուն:

1993 թվականի փետրվարի 27-ից մինչև մարտի 4-ն ընկած ժամանակաշրջանում շատ ազատամարտիկներ վերադարձան Երևան: Մեր շարքերը գնալով նոսրանում էին: Այո, արժե նաև անուն առ անուն հիշատակել բոլոր նրանց, ովքեր հայրենիքի ճակատագիրը հանձնեցին բախտի քմահաճույքին:

Դրանք էին՝ Աշխարհաբեկն ու Սամվելը, Ռոբերտ Աբելի Կարապետյանը, Սարգիս Արամի Դանոյանը, Արամ Բաղդասարի Հակոբյանը, Արամ Հենրիկի Ղազարյանը, Ժորա Գեղամի Սերոբյանը, Էմիլ Ալեքսանդրի Կետիսովը, Հրաչիկ Արամայիսի Զաքարյանը, Ժորա Վարազդատի Գրիգորյանը, Սարիբեկ Սերգեյի Մարգարյանը, Շաքրո Մաջիտի Տելոևը, Նորիկ Խաչիկի Ասատրյանը, Օվսաննա Կարենի Հակոբյանը, Աշոտ Բագրատի Դանիելյանը, Արմենակ Ստեփանի Այվազյանը, Կարապետ Առաքելի Հովհաննիսյանը: Որպես անչափահասներ վերադարձան Արմեն Արշալույսի Զոհրաբյանը, Վարդան Բենիկի Սաֆարյանը, Արմեն Ժորայի Սարգսյանը:

Երևանից չվերադարձան Զիվան Գևորգի Միսիթարյանը, Սամվել Շալիկոյի Ծառուկյանը, Իոսիֆ Հրանտի Անտոնյանը, Կարեն Արամի Դավթյանը, Սամվել Դուխիկի Մարգարյանը, Գագիկ Էդիկի Մուրադյանը, Արմենակ Յուրիկի Միքայելյանը, Վլադիսլավ Ստանիսլավի Նազարյանը, Աշոտ Սահակի Ալեորյանը, Մարտին Աղվանի Ավետիսյանը, Աննա Ֆրանսի Հովհաննիսյանը, Էդիկ Վլադիմիրի Մելիքյանը: Արտավազդ Ժուլվերի Հովհաննիսյանը, Սամվել Նորայրի Մարգարյանը, Սարգիս Շաքարի Գրիգորյանը, Արթուր Երջանիկի Ասատրյանը, Գառնիկ Հմայակի Սարգսյանը, Զիվան Թելմանի Հովսեփյանը, Մհեր Նորայրի Առաքելյանը, Ալեքսան Հակոբի Տեր-Ղուկասյանը: Մարտերին

չմասնակցելու համար ինքն իրեն վիրավորեց Մերուժան Տալիբի Ասկարյանը:

Հերոս նահատակների կողքին գտնվեցին նաև այդպիսիք:

1993 թ. մարտի 5-ին, ժամը 11-ին հրամանատար Ռ. Մարդանյանի հրամանով մենք ժամանակավորապես տեղափոխվեցինք Խոջալու: Հաջորդ օրն այնտեղ եկան նաև Մարդանյանը, մայոր Ռաֆիկ Լիպարիտի Առաքելյանը և այլ կամավորներ:

Հրամանատարը հանձնարարեց ճիշտ կազմակերպել բոլորի հանգիստը, բարձրացնել հոգեկան տրամադրվածությունը:

Գնդապետն իր հետ բերել էր փորձված ազատամարտիկներ Յուրային և Վարդանին, որոնք տակտիկական և տեխնիկական պարապմունքներ էին անցկացնում:

Մարտի 7-ի առավոտյան պարզ եղանակ էր: Խոջալուն ասես շունչ էր առել տղաների ելումուտից:

Այդ օրը ինձ մոտ եկավ կապի դասակի հրամանատար լեյտենանտ Ներսես Արամի Զաքարյանը և հայտնեց, որ Իգոր Գավրիլի Սլիվինը և Գևորգ Ռաֆիկի Սարգսյանը չարաշահել են ոգելից խմիչքը և խանգարել հանգստացող ազատամարտիկների անդորրը: Նրանց խստագույնս պատժեցինք: Դրանից հետո այդպիսի դեպք այլևս չկրկնվեց:

Կապի հրամանատարն իր մասնագիտությանը լավ էր տիրապետում, գնահատում էր կարգապահ ու աշխատասեր զինվորին: Զաքարյանի խստապահանջությունը ռազմաճակատի համար կարևոր նշանակություն ուներ:

1994 թ. հունվարին դադարեց բաբախելուց հայրենասեր զինվորի սիրտը. նա ընկավ Մարտակերտի մատույցներում, ահեղ մարտերի ժամանակ, հայրենասիրական պարտքը կատարելիս:

Մարտի 9-ի երեկոյան լուր ստացվեց, որ Աղդամի ուղղությամբ խրամատներում հերթապահության ժամանակ զինվոր Հովհաննես Թորգոմի Ստեփանյանն, առանց հրամանատարության թույլտվության, խրամատից դուրս է եկել և ցանկացել է տեղանքն ինքնուրույն հետախուզել: Հետևանքն եղավ այն, որ Հովհաննեսն ականի պայթյունից ծանր մարմնական վնասվածք ստացավ և աջ ոտքից զրկվեց:

Խոջալուում եղած ժամանակ մենք բոլորս լավ հանգստացանք: Զինվորները մաքրում ու լվանում էին իրենց հագուստները, կարգի բերում զենքն ու զինամթերքը: Լողանում էին Գյառ-գյառ գետում, որի ջրերը նոր լիցք ու եռանդ էին հաղորդում մեզ:

Գեղեցիկ է Խոջալուի բնությունը: Ամենուր անտառապատ հսկա սարեր են: Արևելքից երևում է Աղդամ քաղաքը, իսկ արևմուտքում

կարծես նիրհում է Ստեփանակերտը: Տեղ-տեղ երևում են նորակառույց շենքեր:

Ազատ ժամերին արցախցիների հետ շատ էի զրուցում ու կրկին անգամ համոզվում, թե որքան բարի, հաստատակամ ու հերոսական ժողովուրդ են: Նրանք պատրաստ են իրենց հայրենի հողն ու ջուրը մինչև վերջ պաշտպանելու: Երախտագիտությամբ են խոսում ազատամարտիկների մասին և համոզված են, որ սպասված հաղթանակին կարելի է հասնել միայն համատեղ ուժերով:

Մարտի 14-ին գնդապետ Մարդանյանը հայտնեց, որ շուտով մեկնելու ենք Մարտակերտ: Այդ օրը հացկերույթ կազմակերպեցինք: Մեզ հետ էին Հին Շեն գյուղի տղաները, որոնց հայրենասիրական երգերը ավելի ու ավելի էին ոգևորում ազատամարտիկներին:

Գարուն էր եկել, ծառերը ծաղկել,
Խոջալուն քնից նոր էր արթնացել:
Զինվորները միշտ անց ու դարձի մեջ,
Երգ էին ասում՝ տանից կարոտով:

Ուրախ երգելով այդ երեկոյին
Թնդում էր գետինը գյուղ Խոջալուի
Երգի աղմուկից հոգիս շարժեցին
Ցնծությունս տվի այս քանի տողին:

Հրամանատարի հրետանու գծով օգնական կապիտան Ֆելիքս Խաչիկի Բարսեղյանը որսի էր գնացել: Բայց, ինչպես միշտ, այս անգամ էլ որսն անհաջող էր անցել: Հետդարձի ճանապարհին որոշել էր գոնե մի թռչուն խփել, բայց դա էլ չեր հաջողվել: Զախորդ որսորդը գիտեր, որ տղաներն էլի պիտի ասեին՝ «Որսորդ ես, բայց առանց որսի»:

Նման մի դեպք էլ Ֆելիքսի հետ տեղի ունեցավ Մարտակերտ գնալուց հետո: Այդ անգամ էլ նապաստակն էր ճողոպրել ու մեր որսորդին առանց որսի թողել:

Կատակներ էլ էին շատ լինում Արցախում:

Պահեստի սպա էր Ֆելիքսը: Սիրում էր իր գործը: Տիրապետում էր զենքի բոլոր տեսակներին: Իր գիտելիքները սիրով ազատամարտիկներին էր փոխանցում: Բոլորի կողմից շատ սիրված մարդ էր: Միասին կռվել ենք Մարտակերտի բարձունքներում: Այդ մասին կպատմեմ հետագայում:

Մարտի 15-ին շտաբի պետ մայոր Ռաֆիկ Առաքելյանի ծննդյան տարեդարձն էր: Այդ օրը լրանում էր նաև թոռնիկիս՝ Անի Ղազարյանի վեց տարին: Որոշեցինք անպայման նշել:

Այդ երեկո շտաբային վաշտի հրամանատար լեյտենանտ Միշա Երվանդի Մհերյանը մեզ իր երգերով ու պարով շատ ուրախացրեց: Պապերը մշեցի էին, իսկ ինքը՝ ծնունդով Ապարանից: Շատ ուրախ և կենսասեր մարդ էր: Կարողանում էր ուրախանալ և ընկերներին ուրախացնել: Հետագայում Միշան աչքի ընկավ Հադրութի պաշտպանության ժամանակ:

Խոջալուում անցկացրած օրերը դեռ երկար կմնան մեր հիշողություններում: Տղաներն արդեն լավ հանգստացել ու թարմացել էին:

Մարտի 17-ին հրամանատար Ռ. Գյուլումյանը հայտարարեց Մարտակերտի շրջան տեղափոխվելու մասին:

Ասկերանի և Հին Շենի պաշտպանական խրամատներից բոլոր հերթափոխները դուրս բերեցինք և ավանից դուրս եկանք:

Նույն օրը հասանք Դրմբոն գյուղ և տեղավորվեցինք մեր նախկին շտաբում: Շտապեցի Ջերմուկի վաշտ. ուզում էի տեսնել հրամանատար Համո Բաբայանին: Բայց նա դեռ բուժումից չէր վերադարձել:

Մարտի 18-ից մինչև 20-ն ընկած ժամանակաշրջանում լուրջ փոփոխություններ տեղի չունեցան: Երևանից եկել էր շարային վաշտի հրամանատարի տեղակալ Ալբերտ Դանիելյանը: Նա մայրաքաղաքից թարմ լուրեր էր բերել: Ոգևորված պատմում էր, որ Երևանում արդեն գազ կա, որ «Նաիրիտը» պետք է աշխատի, գործարկվելու է ատոմակայանի առաջին բլոկը և այլն: Այդ տեղեկությունները զինվորներին բավական քաջալերեցին:

Մարտի 21-ին նոր առաջադրանք ստացանք՝ մեկնել Կուսապատի բարձունքները և խրամատավորվել: Շտաբը տեղավորվելու էր մեծ Շեն գյուղում:

Հետևում թողնելով Մարտակերտի 15-ից ավելի գյուղերը և Սարսանգի ջրամբարը՝ զորամասը կանգ առավ Կուսապատի բարձունքներում: Այնտեղ զինվորների տեղաբաշխում կատարվեց: Արարողությանը ներկա էր հրամանատարի առաջին տեղակալ Սուրիկ Սարգսյանը:

Վերջինս ինձ ծանոթացրեց Արցախ աշխարհի համար մարտնչած մեծ հայրենասեր հրամանատար Մոնթե (Ավո) Մելքոնյանի հետ:

Դա իմ մեծ երազանք էր: Ավոյին տեսնելիս երբեք չէիր ասի, թե այդքան մեծ զորավար է: Հոգով արծիվ էր, իսկ բնավորությամբ հասարակ մարդ:

Ասում են արծիվներ շատ կան Արցախում,
Այդ արծիվներից մեկին ես տեսա,
Անունը Ավո (Մոնթե) Մելքոնյան,
Իրոք արծիվ էր, թշնամուն փորձանք:

Մոլեգնում ու զզվանք էր ապրում,
Երբ կռվից առաջ կատակ էինք անում,
Հոգու վրդովմունք չէր արտահայտում,
Կամաց հուշելով կարգի էր կոչում:

Գրավեց Քելբաջարը մեկուկես օրում,
Իր արծիվներով առաջ էր գնում,
Թշնամին չհասցրեց թաքստոց մտնել,
Զենքերը թողեց ու հայդե փախավ:

Որտեղ որ ասես նա չէր մագլցել,
Լեռներն էին եկել նրան մոտեցել:
Ու գրկում էր նա ահաբեկ զենքեր,
Թռչում էր այսպես տարբեր եզերքներ:

Ափսոս, որ ընկավ արծիվն այդ հսկա:
Նրա երազած Արցախը դեռ կա:
Նա հողը մտավ Մայր Հայրենիքում
Փառքն ու պատիվը մեր Ղարաբաղի:

Գերեզմանիդ այցելեցի ու շուրջդ տեսա,
Մեր եղբայրներին՝ պառկած քո կողքին,
Ում հետ միասին կողք կողքի կանգնած,
Կռիվ էիք տվել հանուն Արցախի:

Չեմ կարող ասել, թե իմ շիրիմը,
Որտեղ կլինի և թե ում կողքին:
Գուցե անծանոթ մի հայ զինվորի,
Թե մեծ զորավար Մոնթեի կողքին:

Թանձր մառախուղ էր, ավտոմեքենաները դժվարությամբ էին շարժվում: Անձրևի տակ Ավո Մելքոնյանը, Ս. Սարգսյանը, Ռ. Գյուլումյանը և ես տեղանքն էինք ուսումնասիրում: Վաշտի և դասակների հրամանատարներին հրամայվեց դիրքավորվել:

Ես առաջարկեցի Մարտակերտի բարձունքներում դիրքավորվելու համար միանալ վաթսուն հոգիանոց զենիթային և ականանետային դասակներին:

Սարգսյանը առարկեց՝ ասելով, որ իրենց դեռ շատ են պետք: Բայց ես էլի համառում էի. շատ էի ուզում տղաների հետ գնալ: Ավոն ընդհանրապես ըմբոստեց միտքս և ասաց, որ չպետք է կոտրել զինվորի սիրտը, և եթե ուզում է, ապա պետք է գնա:

Այդ պահին զգացի, թե ինչպիսի մեծ պատասխանատվություն վերցրի ինձ վրա. դա ռազմաճակատի առաջին գիծն էր:

№ 26317
ՀՀ Կ Ր Գ. Ստեփանակերտ
ՀՀ Կ Ր Գ. St. Panakert
№ 10486
«07» 11 2018

Այդ դեպքին ականատես ազատամարտիկներն անմիջապես շարք կանգնեցին, որպեսզի Ավոն հանդիսավոր, որ տղաները վստահում են իրենց հրամանատարին:

Սարգսյանը և Գյուլումյանն ուրիշ հարցերով էին զբաղված: Նրանց բացակայությունից օգտվելով՝ Ավոն ինձ մի կողմ տարավ ու ձեռքն ուսիս դնելով՝ իր բարի խորհուրդները տվեց. ինչպես մարտից առաջ գոտեպնդել զինվորներին: Վերջում մեզ բարի վերադարձ մաղթեց:

Անմոռանալի այդ օրը ես շատ երկար կհիշեմ: Քաջասիրտ Մոնթեի խորհուրդները մինչև այսօր որպես պատգամ են հնչում ականջիս: Երանի երբեք չբաժանվեի սիրելի զորավարից:

Մեկ ժամ անց արդեն բարձունքներում էինք: Նոր էինք սկսել բեռնաթափվել, երբ մեզ մոտեցավ սև մորուքով, քիչ ճաղատ, միջահասակ, հոգնած դեմքով «Դուշմանը»: Նա սկսեց զինվորներին առաջադրանքներ տալ: Զարմացած մոտեցա ու խնդրեցի ներկայանալ և ինքնությունը հաստատող որևէ փաստաթուղթ ցույց տալ: Անծանոթը քթի տակ ծիծաղեց ու ավելացրեց, որ ինքն այդ ճակատի ուղեկալների հրամանատարն է: Երևի զգաց, որ առաջին անգամն էի առաջին գծում:

Հետագայում «Դուշմանի» հետ մոտ ընկերներ դարձանք:

Ֆելիքս Բարսեղյանը զենիթային և ականանետային դասակների հետ բարձունքի աջ թևն զբաղեցրեց, ես՝ կենտրոնը, իսկ Հենրիկ Հովհաննիսյանը 2-րդ վաշտի զինվորներով դիրքավորվելու էր ձախ թևում:

Նոր էինք տեղավորվում թշնամու խրամատներում, երբ ինձ մոտեցավ մի ազատամարտիկ և հայտնեց, որ բարձունքի գրավման ժամանակ զոհվել է իրենց հրամանատար Արմեն Մուշեղի Մխիթարյանը: Դիակն արդեն մեր ավտոմեքենայով Ստեփանակերտ էին ուղարկել:

Բոթը ցնցեց բոլորիս: Հետագայում իմացանք, որ Արմենը թշնամու հետ բացեիբաց մարտի էր մտել և կրծքին ստացած վերքից զոհվել:

Արմենը մեր գումարտակի առաջին վաշտի զինվորներից էր, որ հետագայում զրահամեքենայի հրամանատար էր դարձել:

Մարտակերտի Պուշկին Յալ կոչվող բարձունքի գրավումն Արմենի գլխավորած հանառ մարտերի արդյունքն էր:

Անկուն հերոս էր Արմենը: Եվ դեռ ինչքա՜ն անելիքներ ուներ: Քաջասիրտ հրամանատարի իղձերը կիրականացնեն նրա սիրելի ընկերները:

Իմ կողքի խրամատում էր պառկած սակրավորների դասակի հրամանատար կապիտան Զամբուլ Զիվանի Եփրեմյանը, որը զոհվեց Հադրութի շրջանի ինքնապաշտպանության ժամանակ:

Շատ կենսուրախ տղա էր: Ընկերների տրամադրությունը բարձրացնելու համար Զամբուլը և ես իրար հետևից արտասանում էինք Չարենցի, Թումանյանի, Սևակի, Շիրազի բանաստեղծություններից:

Մի անգամ խրամատում Անդրանիկի մասին էի կամաց երգում: Տղաները ձայնակցեցին ինձ, և այն խրամատից խրամատ տարածվեց:

Երգից հետո Զամբուլն ամբողջ «Անուշ» պոեմն արտասանեց:

Այսօր ցավով եմ հիշում Զամբուլի կորուստը և ափսոսում, որ նա էլ մեր շարքերում չէ:

Նույն խրամատում էին զինվորներ Արթուր Ստեփանի Մնացականյանը, Նորիկ Միսակի Մանուկյանը, որը նույնպես զոհվեց Հադրութում:

Նորիկը համարձակ կապավոր էր: Մարտի ժամանակ միշտ մի ձեռքին հեռախոսափողն էր, մյուսին՝ ավտոմատը: Հետևում էր թշնամու բոլոր գործողություններին:

Քաղցր չէր եղել նրա կյանքը, վաղ մանկությունից զրկվել էր մայրական գուրգուրանքից, սովորել էր ու միաժամանակ աշխատել:

Հուզմունքով էր պատմում իր մասին: Նորիկը զոհվեց իր հետևից լավ անուն ու բարի վաստակ թողնելով:

Նորիկի հետ էր տնտեսական դասակի հրամանատար ենթասպա Արամ Արշավիրի Օհանջանյանը:

Փորձված հրամանատարի շնորհիվ էր, որ անառիկ մնացին Մարտակերտի բարձունքները:

Արամը շատ անգամ էր Արցախի ինքնապաշտպանությանը մասնակցել: Կարողանում էր թշնամու նպատակները շուտ կռահել: Լուրջ ու կշռադատված, քչախոս, գաղտնապահ մարդ էր: Մեծ սեր ու հարգանք էր վայելում ինչպես ազատամարտիկների, այնպես էլ հրամանատարության շրջանում: Հանգստից հետո էլ շարունակեց իր առաքելությունը Հադրութի պաշտպանության ժամանակ:

1994 թ. հունվարին Մարտակերտի պաշտպանության ժամանակ իր մահկանացուն կնքեց:

Զինվորներին թողեցինք դիրքերում, իսկ Նորիկ Մանուկյանը և ես գնացինք 2-րդ վաշտի տղաների մոտ:

Եղանակը սաստիկ ցուրտ էր: Դա առաջին գծում իմ առաջին գիշերն էր: Մի անասելի սարսուռ էր պատել ինձ: Զինվորներից Թելման Ֆրինջիբաշյանն իր անձրևանոցն ինձ մեկնեց:

Ամբողջ գիշեր խրամատից խրամատ անցնելով անցկացրինք: Դողը դանդաղով ավելի էր ուժեղանում:

Առավոտյան արևը դեռ նոր էր դուրս եկել և չէր հասցրել շրջապատը փոքր-ինչ ջերմացնել, երբ նկատեցինք, որ թշնամու զրահասայլը

մեծ արագությամբ մեր տղաների զբաղեցրած խրամատների ուղղությամբ է շարժվում: Զինվորներից Լուրիկ Լենդրուշի Հայրապետյանն անմիջապես վերցրեց նռնականետը և կրակեց ուղիղ զրահասայլի վրա: Արկը կպավ առջևի ձախ մասին: Թշնամու մեքենան հազիվ կարողացավ փոխել ուղղությունը և փախուստի դիմել:

Հետաքրքիր էր այդ տեսարանը հատկապես ինձ համար, որովհետև առաջին անգամն էի ականատես լինում նռնականետի «աշխատանքին»:

Կարծես թե ամեն ինչ խաղաղվեց: Ես ու Նորիկը հրաժեշտ տվեցինք տղաներին ու մեր դիրքերը վերադարձանք:

Նոր էինք տեղ հասել, երբ թշնամին նորից սկսեց իր ավերիչ գործողությունները: Մեր դիրքերի վրա տարբեր զենքերից ու տեխնիկայից արկերի հեղեղ էր տեղում:

Պատճառն այն էր, որ ընդամենը մեկ օր առաջ էին այդ դիրքերը թողել և մեր այստեղ տեղավորվելու մասին շատ լավ գիտեին:

Ժամը տասն էր, երբ իրար հետևից երկնակամարում երեք այսպես կոչված «կրոկոդիլներ» երևացին: Մենք առանց կրակոցների էինք պաշտպանվում: Ուղղաթիռներն ընդհուպ մոտեցան մեր խրամատներին, և թվաց, թե ամեն ինչ վերջացած էր: Բայց քիչ հետո նրանցից մեկն օդում բոցավառվեց ու ընկավ Միրբաշիր տանող ճանապարհի եզրին, իսկ մյուս երկուսը փախուստի դիմեցին:

Հետագայում իմացանք, որ մեզ փրկողը մի արցախցի զինվոր էր եղել:

Ուղղաթիռների հեռանալուց հետո ոսոխը հարձակումն ավելի սաստկացրեց: Մինչև ժամը 18-ը բարձունքի վրա անընդհատ կրակ էր տեղում:

Տղաներից շատերը Մարտակերտում առաջին անգամ էին լինում, բայց բոլորն էլ իրենց հերոսների պես պահեցին:

Այդ օրը նրանց համար անսովոր, բայց հիշարժան էր:

Ուշ երեկո էր, երբ Արամ Օհանջյանի հետ որոշեցինք 2-րդ վաշտի ազատամարտիկներին նորից այցելել, պետք էր ստուգել, թե թշնամուն ինչպե՞ս էին դիմակայել:

Սարի լանջով էինք գնում: Թշնամու արկերը ավվալով անցնում էին մեր գլխավերևով և հասնում մինչև Հոռաթաղ գյուղը, որը մեզանից 600 մետր հեռավորության վրա էր:

Սողեսող մի կերպ հասանք տղաներին: Այնտեղ ամեն ինչ կարգին էր. զոհեր կամ վիրավորներ չկային, իսկ զինվորների տրամադրությունը մարտական էր:

Հյուսիսային սառը քամին հանգիստ չէր տալիս: Խրամատներից պարզ երևում էր գիշերային խավարի մեջ ընկղմված Մարտակերտը, իսկ հեռվից լսվում էին շնագայլերի ու կզաքիսների ոռնոցներ:

Վաշտը փորձառու զինվորներով էր համալրված: Այնպես որ դիրքերը հուսալի ձեռքերում էին:

Վաշտի հրամանատար Հենրիկ Հովհաննիսյանը զինվոր Սուրեն (Թելման) Հովհաննեսի Ֆրինջիբաշյանի մասին գովեստով էր խոսում: 1989 թվականից մասնակցել էր հայրենիքում տեղի ունեցող քաղաքական փոփոխություններին, եղել էր Իջևանի, Տաուշի շրջանների պաշտպանական մարտերի ակտիվ մասնակիցներից: Մարտեր էր մղել Շուշիի գրավման համար, քնչական մեկուսարանի շենքն էր մտել և պետին ձերբակալել: Մասնակցել էր նաև պաշտպանական մարտերին, իսկ այժմ կանգնած էր բարձունքում և երազում էր այն լուսավոր օրը, երբ նորից պետք է քաղաքը վերցնեն:

Թելմանը հետագայում Հադրութի պաշտպանությանն ակտիվ մասնակցություն ցուցաբերեց:

Այստեղ անպայման պետք է հիշատակել ինձ շատ մտերիմ, հրամանատար Հենրիկ Հովհաննիսյանի անունը: Հոյակապ մարդ էր, հրաշալի հրամանատար ու անվախ զինվոր: Ծնվել էր Թալինի շրջանի Ն. Սասնաշեն գյուղում:

Դեռևս 1988 թվականից «Սասուն» ջոկատում էր եղել: Մեղրու շրջանի ինքնապաշտպանությանն էր մասնակցել, իսկ Ավոյի ջոկատի հետ՝ Գորիսի շրջանում ընթացող մարտերին: Մասնակցել էր նաև Շուշիի գրավմանը, Կոռնիձոր, Տեղ, Մարտակերտ և Ոսկեպար գյուղերի ինքնապաշտպանության համար մղվող մարտերին:

Ծուռ էր ծաղիկը, գլխիկոր
Կոիվ տվին Կոռնիձոր
Ընկան տղերք դյուցազուն,
Ողջ չդարձան իրենց տուն:

Հինգ անգամ վիրավորվել էր, բայց էլի առաջին դիրքերում էր:

Հրամանատարությունը, բարձր գնահատելով Հենրիկի ծառայությունը, նրան ռազմական գծով գումարտակի հրամանատարի առաջին տեղակալ նշանակեց (այդ ժամանակ գումարտակի հրամանատարը ես էի):

Հունիսի 15-ին Հենրիկը 45 զինվորներով մեկնեց Հադրութի շրջանի ինքնապաշտպանական մարտերին մասնակցելու:

Մարտակերտի բարձունքներում էր մարտնչում նաև Ռազմիկ Արամի Պապիկյանը:

Ծնվել էր 1955 թվականին Ստեփանավանի շրջանի Կուրթան գյուղում: Մասնակցել էր Նոյեմբերյանի շրջանի Ոսկեպար, Կոռնիձոր, Ֆարաջա, Վաղուհաս, Վանք գյուղերում տեղի ունեցած մարտերին: Իր մեծ փորձը նա սիրով էր փոխանցում բոլոր նրանց, ովքեր առաջին անգամ էին եկել պաշտպանելու հայրենիքը:

Մի խոսքով, Մարտակերտի բարձունքները հուսալի զինվորների ձեռքերում էին գտնվում: Այնտեղ իրենց հերոսաբար դրսևորեցին կամավորներ Լուրիկ Լենդրուշի Հայրապետյանը, Նորիկ Գուրգենի Գրիգորյանը, Ռոբերտ Սուրենի Եղոյանը, Գաբրիել Ռոստոմի Մարկոսյանը, Կամո Գրիգորի Ծատուրյանը, Վահան Երջանիկի Հովսեփյանը, Գրիշա Սաշիկի Ղազարյանը, Կնյազ Գարեգինի Սարգսյանը, Շուրա Վազգենի Բարսեղյանը, Վարազդատ Աղվանի Աստվածատրյանը, 18-ամյա Կարեն Էդիկի Գրիգորյանը, որը դիպուկ նշանառությամբ կարողացավ ոչնչացնել թշնամու զրահասայլը, այն տղաների դիրքերի վրա լուրջ հարձակում էր ձեռնարկել:

«Ապրի՛ Կարենը, ապրի՛ Կարենը», — այդպես էին նրան ողջունում վաշտի տղաները:

Կարենի սխրանքը խրախուսվեց նաև հրամանատարության կողմից:

Ամիսներ անց Հենրիկի մասին իմ հիշողություններն էի գրում, երբ աշխատասենյակ մտավ Լուսակերտի կամավորական գումարտակի հրամանատար կապիտան Առաքել (Ծմայս) Մովսիսյանը և հայտնեց, որ անվեհեր հրամանատարը 1994 թվականի հունվար ամսին հերոսաբար զոհվել է Մարտակերտում:

Ոչ մի կերպ չէի կարողանում հավատալ և ընկալել այդ բոթը: Հոգիս տակնուվրա էր լինում, հարազատ ընկերս այլևս չկար:

Մարտի քսանմեկին և քսաներկուսին օրերն անցան առանց մարտերի:

Հաջորդ օրը սնվելու համար ոչինչ չունեինք, իսկ խմելու ջուրը պետք է բերվեր Հոռոթաղ գյուղից, որը մեզանից մեկ կիլոմետր հեռավորության վրա էր գտնվում: Զինվորները սաստիկ ծարավ էին, ուստի որոշեցինք երկու հոգու ուղարկել ջրի: Սակայն մեր որոշումը չիրականացավ, որովհետև այդ օրը թշնամին իր սև գործը շուտ սկսեց: Մենք պաշտպանվում էինք ճվազագույն կրակոցներով, քանի որ զինամթերքը պետք էր խնայել: Պաշտպանվելն ավելի դժվար էր, քան հարձակվելը:

Ուշ երեկո էր, երբ հրամանատարի հրետանու գծով օգնական Ֆելիքս Բարսեղյանը և ազատամարտիկ Արամ Արշավիրի Ավագյանը (Բուդուլայ) մեզ մոտ եկան: Նրանց մտախոհ դեմքերից գուշակեցինք, որ ինչ որ վատ բան էր պատահել: Իրոք, նրանց կցկտուր խոսքերից տեղեկացանք, որ «Զուբը» զոհվել էր:

Մի պահ քար լռություն տիրեց. զոհվել էր զենիթային դասակի հրամանատար լեյտենանտ Գեղամ Վահագնի Խլղաթյանը: Արկն ընկել էր խրամատը և խլել ջահել հերոսի կյանքը:

Գեղամն արդեն երեք տարի էր ինչ կռվում էր: Մի քանի անգամ վիրավորվել էր, բայց էլի շարք էր մտել, չհրաժարվելով իր վեհ նպատակներից: Տեսնելով իր ընկերների մահը, ավելի մեծ ատելությամբ էր լցվում թշնամու նկատմամբ և որոշել էր մինչև վերջ նրանից վրեժխնդիր լինել:

Շատ կենսախինդ տղա էր: Թեժ մարտի ժամանակ էլ երգում էր ու ընկերներին ոգևորում: Դեմքին միշտ փայլում էր ժպիտը:

Գեղամի մահից մեկ օր առաջ էինք տոնել նրա ծննդյան տարեդարձը: Այդ օրը շատ կատակներ արեցինք և շատ ուրախացանք: Սակայն մենք չգիտեինք, թե վաղը մեզանից յուրաքանչյուրին ինչ էր սպասվում:

Գեղամի հետ նույն խրամատում ծանր վիրավորվել էր Սոս Հովսեփի Հովսեփյանը:

Գեղամի զոհվելուց և Սոսի վիրավորվելուց հետո զենիթային դասակի զինվորների տրամադրությունն ընկած էր: Հաջորդ օրը որոշեցի նրանց մոտ գնալ:

Ֆ. Բարսեղյանը հայտնեց նաև, որ սննդի և ջրի պաշարները վաղուց սպառվել են:

Այդ օրերին սնունդ բերող մեքենաները ճանապարհի գնդակոծություններից շարքից դուրս էին գալիս և չէին կարողանում տեղ հասնել: Զոհվում կամ վիրավորվում էին ինչպես վարորդները, այնպես էլ ուղեկցող զինվորները:

Մենք լավ էինք գիտակցում, որ ռազմի դաշտում ամեն ինչ հնարավոր էր, ուստի դիմանում էինք և հույսով սպասում:

Հրամանատարի տեղակալը զինվորների մոտ գնաց, իսկ Արամ Ավագյանը որոշեց ջուր բերելու համար մեկնել Ն. Հորաթաղ:

Երկար ժամանակ Արամին էինք սպասում, բայց նա չվերադարձավ: Առավոտյան Արամ Օհանջանյանը և ես գնում էինք 2-րդ վաշտի տղաների մոտ: Խրամատում հանկարծ ջրաման նկատեցինք: Մոտե-

ցանք ամանին և սկսեցինք զգույշ շարժել՝ մտածելով, որ երևի ակա-
նապատված է: Արամը բարձրացրեց այն՝ ամանի մեջ ջուր կար:

Վերցրինք ջրամանը և ուրախ-ուրախ խրամատ վերադարձանք:
Երեք լիտր ջուրն իրար մեջ բաժանեցինք և ծարավներս փոքր-ինչ
հագեցրինք:

Ջուրը խմեցինք և մեր ճանապարհը շարունակեցինք:

Դեռ նոր էինք զինվորներին հասել, երբ նրանց բողոքի ու դժգո-
հության ձայները լսեցինք: Իսկապես մարդիկ սաստիկ քաղցած ու
ծարավ էին: Հայտնեցի Գեղամի զոհվելու և Սոսի վիրավորվելու մա-
սին: Նրանք, գանգատները մոռանալով, միանգամից լռեցան:

Դա այն պահերից մեկն էր, երբ մարդ իրեն տանջող ցավը մոռա-
նում և անդարձ կորցրածի մասին է խորհում:

Մեկ ժամ հետո, երբ մեր խրամատները վերադարձանք, Արամ
Ավագյանն արդեն հետ էր եկել: Պարզվեց, որ ջուրը գիշերն էր բերել
և մեզ փոխանցել չէր հասցրել՝ մտածելով, որ թշնամին կարող էր նկա-
տել ու դիրքերը գնդակոծել:

Համարձակ զինվոր էր Արամը: Նա էլ արդեն երեք տարի էր, ինչ
կռվում էր Արցախի ինքնապաշտպանության համար: Սիրում էր իր
ընկերներին, իսկ առավել մեծ սիրով էր լցված հայրենիքի նկատմամբ:

Այդպիսի ազատամարտիկները շատ են պետք հայրենիքին:

Արցախում եղած օրերին միշտ մտածում էի, թե ինչո՞ւ է Աստված
հայերիս այդքան դառը ճակատագիր բաժին հանել: Դարեր շարունակ
օտար ազգերն ասպանդակել, թալանել ու կողոպտել են մեր ժողովրդ-
դին:

Այդ նույն խոհերն էին պաշարել հոգիս նաև 1990 թ. նոյեմբեր
ամսին Դեր-Զորի անապատներում, ուր պետք է հորս ուխտը կա-
տարի: Ուխտի նպատակը հորս վաղեմի ցանկությունը կատարելն էր.
իր զավակներից մեկը խաչքար պետք է տաներ Սիրիա, Դեր-Զորի
անապատ՝ 1915 թվականին այդտեղ զոհված հայորդիների հիշատակն
անմահացնելու, Եփրատ գետում, այնուհետև Միջերկրական ծովում
լողանալու, ուր հայրս անց էր կացրել իր մանկության օրերը:

Դեր-Զոր գնացի Հալեպի արքեպիսկոպոս Սուրեն Քաթառոյանի,
Տիգրանակերտցի Սահակ Օհանյանի և Հայկազունու հետ: Ճանապար-
հի մի հատվածում մեր ավտոմեքենան կանգ առավ: Ավտոմեքենայից
իջավ Ս. Քաթառոյանը: Մենք հետևեցինք նրան: Մեքենան առաջ ան-
ցավ ու բավական հեռավորության վրա կանգ առավ: Ճանապարհի
ձախ կողմով դանդաղ սողում էր Եփրատ գետը:

Սահակ Օհանյանին հարցրեցի, թե ի՛նչ է նշանակում այս: Նա ինձ

պատասխանեց, որ սա էլ սրբազանի ուխտն է: Ամեն անգամ Դեր-
Զոր մեկնելիս նա այս ճանապարհի մի հատվածն անպայման ոտքով
է անցնում, որպես հարգանքի տուրք մեր նահատակներին:

Անապատով իսկապես անտարբեր չես անցնի, քանի որ այնտեղ
էին քշվել ութ հարյուր հազար անմեղ հայեր ու կոտորվել թուրքի
յաթաղանից: Այնտեղ էին զոհվել նաև հայ մշակույթի ու արվեստի
երկու հարյուր հիսուն գործիչներ:

Տխուր էր տեսարանը: Հայն իր հարազատ երկրից գաղթել է
կամ կռիվների մեջ եղել: Պատմությունը կրկնվում է նաև այսօր:

Աստված իմ, ինչե՞ր միայն չի տեսել հայը. ծովից ծով երկրից մնա-
ցել է ընդամենը մի ափ հող:

Վերադարձին օդանավն անցնում էր հայ գիտության կենտրոնով.
տեսա Վան քաղաքը, լիճը, քանդված ու ավերված շենքերն ու գյուղե-
րը: Գլուխս աղմեցի օդանավի պատուհանին ու հոգիս ցավից կծկը-
վել էր:

Հիմա էլ անցնում եմ Արցախ աշխարհով՝ կռիվների՝ լաց ու կոծի
երկրով:

Ո՛ր կողմը նայես ջարդված ու փշրված հին ու նոր գերեզմանա-
քարեր, շենքեր, փողոցներ, պապերից հիշատակ թողնված խաչքարեր,
վանքեր ու եկեղեցիներ, գյուղեր ու ավաններ:

Չեմ կարող մեկիկ-մեկիկ չհիշել այն զինվորներին, որոնք հանուն
ազգի գոյության թողել են տուն ու տեղ, եկել ու կռվում են հանուն
Արցախի, որպեսզի մեզանից հետո եկող սերունդները մեզ չանիծեն,
գաղթական կամ թափառական չդառնան:

Ինչպես վերևում ասացի, աջ թևս թշնամու առաջխաղացումից
պաշտպանում էին զենիթային և ականանետային դասակների զինվոր-
ները՝ Ֆելիքս Բարսեղյանի ղեկավարությամբ: Բարձունքներում իրենց
սուրբ պարտքը կատարեցին նշված դասակների զինվորներ Սերժ Սըմ-
բատի Մանասյանը, Ռաֆիկ Համլետի Պապայանը, Սուրեն Սեդրակի
Սահակյանը, Շահեն Գեղամի Մանուկյանը, Վարդան Մանուկի Պողոս-
յանը, Գուրգեն Նիկոլայի Տոնոյանը, Ստյոպա Ցոլակի Խաչատրյանը,
Արմեն Պողոսի Աբրահամյանը, Պետրոս Սամվելի Գրիգորյանը, Սար-
գիս Պողոսի Կիրակոսյանը, Նվեր Արտավազդի Հովհաննիսյանը, Անդ-
ռանիկ Արամի Հարությունյանը:

Հետագայում Կուսապատի բարձունքների մարտերում զոհվեց
Սմբատ Կոունկի Միրզոյանը:

Մարտի 24-ի առավոտյան իմացանք, որ սննդամթերքով բեռնա-

վորված ավտոմեքենան նորից էր թշնամու կողմից գնդակոծվել: Այդ օրն էլ տղաները քաղցած ու ծարավ մնացին:

Սիրտս կտոր-կտոր էր լինում, երբ տեսնում էի նրանց դեմքերը: Ստիպված սկսեցի պատմել, թե ինչպես են ուրիշ զինվորներ օրերով ու շաբաթներով դիմադրել ամեն մի փորձությանն:

Այդ օրը, ժամը 10-ից մինչև 16-ը, ուժգին հրետակոծությունն սկսվեց: Երկար ժամանակ չէինք կարողանում նույնիսկ գլուխներս վեր բարձրացնել:

Զինվորները հետզհետե սովից ու ծարավից թուլանում էին: Ծանրահատված որոշեցի խրամատից դուրս գալ և գոնե թշնամու նախկին դիրքերում ուտելու բան փնտրել: Խրամատից խրամատ անցնելով դուրս եկա այն ճանապարհը, որտեղով մենք էինք եկել: Հեռվում մի թոլոյա արկղ նկատեցի: Մոտեցա և շրջապատս ուսումնասիրելուց հետո արկղը բացեցի: Ուրախությանս չափ չկար: Փրկված էինք. արկղի մեջ 12 տուփ տավարի պահածո և կիսաչոր 8 հաց կար:

Հետդարձի ճանապարհը շատ կարճ թվաց: Տեսնելով ծանրոցը տղաներն աղմուկ-աղաղակով դիմավորեցին ինձ:

Մեր խոհարարը՝ Տիգրան Անուշավանի Մարտիրոսյանը, հաց բաժանելու հմուտ մասնագետ էր, նա անցավ իր գործին և այնպես արեց, որ բոլորին էլ հասներ:

Այդ օրը մի փոքր թեթևացած զգացի:

Տիգրանն ու ես 2-րդ վաշտի կամավորներին հասանելիք բաժինը վերցրինք և շտապեցինք նրանց մոտ: Տղաները վրդովված էին: Տիգրանը բացատրեց, որ սնունդ չի ստացվել, դա պարոն Ղազարյանն է հայթայթել:

Նրանց պահանջները քիչ թե շատ բավարարելուց հետո սկսեցի մտածել աջ թևում գտնվող զենիթային և ականանետային դասակների մարտիկների մասին: Տիգրանը երևի հասկացավ մտահոգությանս պատճառը և ինձ շեղելու համար անընդհատ ինչ-որ բան էր պատմում: Բայց տղաների վիճակն ինձ շատ էր անհանգստացնում: Դրա համար երկու պահածո, մեկ հաց վերցրինք և նրանց մոտ գնացինք:

Ճանապարհին Տիգրանը Երևանում իր եփած ճաշատեսակներն էր հիշում ու դրանք այդ աղքատիկ ուտելիքի հետ համեմատում: Մտքովս մեր լեռների սառնորակ ջրերն էին: Այնքան էի կարոտել մեր գեղեցիկ բնությանը, մեր տանը, որ ընկել էի քաղցր հիշողությունների գիրկը և չզգացի թե ճանապարհն ինչպես անցանք:

Երբ իջել էինք բլրից, զրահապալներ նկատեցինք: Իսկույն հասկացանք, որ Արցախի զինվորները մեր տղաներին հացով ապահովել են: Այդ լուրը մեզ շատ ուրախացրեց:

Զրուցում էինք Սահակի մարտական ընկերների հետ, երբ արկն ընկավ ուղիղ մեր կողքին: Բեկորը ծակեց կոշիկիս կրունկը և ոտքիս վրա աննշան հետք թողեց:

Թշնամին մեզ ոչ մի րոպե հանգիստ չէր տալիս: Արկեր էին, որ հեղեղի պես թափվում էին խրամատների վրա: Փառք Աստծո, որ այդ երկու օրվա ընթացքում տղաներից ոչ մեկին ոչինչ չպատահեց:

Սահակենք պատրաստվեցին հակահարվածի, իսկ մենք, հացն ու պահածոն նրանց թողնելով, վերադարձանք մեր դիրքերը:

Ճանապարհին եղանք 2-րդ գիծը պահպանող Արցախի զինվորների մոտ: Նոր էինք զրույցի բռնվել, երբ հրետակոծությունն սկսվեց: Արկերն ընկնում էին բարձունքի տակով անցնող ճանապարհի վրա, որտեղով անցնում էր մեր զորամասին պատկանող «Ուրալ» ավտոմեքենան:

Տղաներն ակնթարթային արագությամբ նետվեցին չմշակված արտի մեջ ու պառկեցին: Հաջորդ արկն ընկավ ավտոմեքենայի կողքին:

Այդ զարհուրելի տեսարանը մեր աչքերի առջև էր կատարվում:

Վտանգն անցնելուց հետո տեսանք թե տղաներն ինչպես ոտքի կանգնեցին ու մեքենան թողնելով, անհետացան անտառի մեջ:

Հետո իմացանք, որ նրանք մեզ սնունդ էին բերում, որը դարձյալ տեղ չհասավ:

Արցախցի մարտիկներին հրաժեշտ տալով, կրակի տարափի տակ, մի կերպ հասանք խրամատները:

Տեղ հասնելուն պես որոշեցի Սահակ Արմենակի Եղիգարյանի մասին իմ հիշողությունները գրել:

Նա ծնվել էր 1951 թ. Արմավիրի շրջանի Արմավիր գյուղում: 1988 թ. մասնակցում է ազգային-ազատագրական շարժումներին: Արցախյան շարժման ակտիվ մասնակիցներից էր: 1993 թ. կամավոր զինվորագրվել էր ազգային բանակին և ստանձնել ջոկատի հրամանատարի պաշտոնը:

Արցախ մեկնել ենք միասին: Հիշում եմ, երբ Առաջաձոր գյուղ տեխնիկային տիրապետող մարդկանց էին ընդունում, Սահակն առաջիններից էր, որ զրահատանկային խմբի մեջ ընդգրկվեց: Նրան հետևեցին Ալբերտ Վոլոդյայի Մայիլյանը, Սարգիս Վազգենի Հովսեփյանը և ուրիշներ: Թվով 10 կամավորներ նույն օրը բաժանվեցին մեզանից: Սահակն իրեն վստահված տանկով մասնակցել է Սարսանգի ջրամբարի, Ումուդլու, Վաղահաս, Զլդրան, Դրմբոն, Մեծ Ծեն, Մոխ-

ռաթաղ գյուղերի, ինչպես նաև Մարտակերտի բարձունքների համար մղվող մարտերին: Լեգենդար Մոնթեի հետ մասնակցել է Քելբաջարի գրավմանը:

Հրամանատարությունն արժանի զավակի կատարած սխրանքները բարձր է գնահատել: Նրա մասին «Զինվոր» և այլ թերթերում շատ է գրվել: Սահակն այն զինվորներից է, որոնք հանձնարարությունները ամենայն պատասխանատվությամբ են կատարում:

Նոր էի Սահակի մասին հիշողությունները վերջացրել, երբ ձախ կողմում, շատ մոտիկից, տանկի հոնդյուն լսվեց: Այդ պահին Արցախցի երկու երիտասարդ զինվոր մոտեցան մեզ ու նոնականետ խնդրեցին:

Հայտնեցին նաև, որ թշնամու տեխնիկան ճեղքել է մեր ձախ թևը, և 2-րդ վաշտի տղաների կյանքը վտանգի տակ է: Մենք արցախցիների խնդրանքը ցավոք չկարողացանք բավարարել, որովհետև այդպիսի զենք չունեինք:

Անհանգստությունը պատեց ամբողջ էությունս, ինչ էլ լիներ, չպետք է թողնեինք, որ թշնամին մեր թիկունքն անցներ:

Մտածում էի հետագա անելիքս, երբ նույն երիտասարդները քարտինքի մեջ կորած անցան այն կողմը, որտեղից թշնամին հարձակման էր նախապատրաստվել:

Քիչ հետո լսվեցին նրանց կրակոցները, իսկ մենք դեպի մեզ եկող գերակշիռ ուժերի հետ մարտի բռնվեցինք: Վերջիններս, չդիմանալով մեր ճնշմանը, մարտադաշտում թողնելով զոհերին ու վիրավորներին, խուճապի մատնվելով դիմեցին փախուստի:

Կրկին անգամ համոզվեցի, որ թշնամու ամեն մի հարձակում կարելի է կասեցնել, եթե կողքիդ անվեհեր քաջեր են կռվում:

Մթնեց:

Գիշերային խավարից օգտվելով, հակառակորդը մարտադաշտից վիրավորներին դուրս բերեց, իսկ մեռածներին թողեց տեղում:

Հաջորդ օրն առավոտյան 2-րդ վաշտի տղաների մոտ շտապեցի: Հենրիկ Հովհաննիսյանը զեկուցեց, որ թշնամու երեք տանկերը ճեղքելու փորձ են արել, բայց արցախցի տղաներից մեկը կարողացել է նոնականետով դրանցից մեկը վնասազերծել, իսկ մյուսները փախուստի են դիմել:

Խրամատ վերադառնալով, հանդիպեցի Ֆ. Բարսեղյանին: Նա ինձ զեկուցեց իրենց նախորդ օրվա մարտերի մասին: Ծնորհակալություն հայտնեցի, որ կարողացել էին թշնամուն արժանի հակահարված հասցնել, որը կորուստներ տալով, դիմել էր փախուստի:

Ժամը 22-ին բարձունքի աջ մասից մեքենայի շարժիչի ձայն լսվեց: Արամ Օհանջանյանն ու ես զգուշորեն սողացինք ձայնի ուղղությամբ, պարզելու համար, թե մեր թիկունքում ինչ էր տեղի ունենում:

Մի քանի մետր հեռավորության վրա մեծ թվով զինվորներ նկատեցինք, որոնք հայերեն էին խոսում: Ավելի առաջ գնալով, պարզեցինք, որ Կիրովականի կամավորական գումարտակի զինվորներն էին և եկել էին օգնության:

Նրանց հետ շտապօգնության մեքենա կար, որը վիրավոր զինվորներին տեղափոխելու էր դաշտային հոսպիտալ:

Արամի հետ խորհրդակցելուց հետո որոշեցի օգտվել առիթից և մեքենայով մեկնել շտաբ տղաներին փոխարինող պահանջելու համար:

Մի կերպ խցկվեցի մեքենայի մեջ և եկա շտաբ:

Զայրույթիս սահման չկար: Հրամանատար Գյուլումյանի մոտ մտա, անցած օրերի մարտերի մասին զեկուցեցի և առաջարկեցի շտապ 30 հոգիանոց մի դասակ կազմել՝ տղաներին փոխարինելու համար:

Ճիշտ է, տղաները պատրաստ էին էլի կռվելու, բայց մեկ ամսից ավելի էր, ինչ մարտի դաշտում էին և սաստիկ հոգնել էին, կարոտել հարազատներին: Պատրաստ էին կարճատև հանգստից հետո վերադառնալ և շարունակել հայրենիքի պաշտպանությունը:

Ժամը երեքին շտաբից դուրս եկանք: Մութ գիշեր էր. ճանապարհը կորցրեցինք և մտանք Ն. Հոռաթաղ գյուղը, ուր դարանակալել էր թշնամին: Նրանք կարծեցին թե իրենց մեքենաներից է և կրակ չբացեցին:

Վարորդ Ռաֆիկ Կորյունի Ալոյանը, զգալով մեզ սպասող վտանգը, տեղանքում արագ կողմնորոշվեց և գտավ ճիշտ ճանապարհը:

Ես շտապ վերադարձա, իսկ զինվորներն առաջին վաշտի հրամանատար Բորիս Վիտալիի Հակոբջանովի հետ մեկնեցին նշանակված վայրը, որպեսզի փոխարինեին զենիթային և ականանետային դասակներին:

Հակոբջանովը երեք տարի ծառայել էր Աֆղանստանում, պատերազմի մեծ փորձ ուներ: Հմուտ ռազմագետ էր: Կարողանում էր զինվորներին իր հետևից տանել: Նա զոհվեց 1994 թ. ապրիլ ամսին, Մարտակերտի մարտերի ժամանակ:

Բորիսի հետ մեկնեց նաև նրա հավատարիմ տեղակալ Միսակ Սուրենի Հովհաննիսյանը, որը երկար ժամանակ մասնակցել էր ինչպես Հայաստանի սահմանամերձ շրջանների, այնպես էլ Լեռնային Ղարաբաղի ինքնապաշտպանությանը: Աչքի էր ընկնում իր խիզախությամբ և ռազմական գործին տիրապետելու հմտությամբ:

Հանգստից հետո հավատարիմ ընկերներն իրենց մարտական երդ-
շարունակեցին Հադրութի շրջանի ինքնապաշտպանական մարտերում
և պատվով վերադարձան հանգստի: Ցավոք, Բորիսը ծանր վիրավոր-
էր. հետո ապաքինվեց և նորից Միասակի հետ մեկնեց Մարտակերտ:

Համարձակ հրամանատարների հետ մեկնեցին բուժքույրեր Անա-
հիտ Լևոնի Վարդանյանը և Սիլվա Համբարձումի Ղազարյանը:

Նրանք չորս տարի շարունակ մարտնչել են հայրենիքի պաշտ-
պանության համար: Իրենց կյանքը վտանգելով՝ մարտի դաշտից դուրս
են բերել վիրավորներին, հարազատ քրոջ պես փայփայել ու նոր կյանք
պարգևել նրանց: Ողբացել են ամեն մի ընկած զինվորի համար: Անա-
հիտն ու Սիլվան մեզ հետ մասնակցել են Սարսանգի ջրամբարի, Մար-
տակերտի 20 գյուղերի համար մղվող մարտերին: Շատ դիպուկ էին
կրակում և իրենց եղբայրներից ոչնչով հետ չէին մնում: Մասնակցել
են նաև Հադրութի և ներկայումս էլ Մարտակերտի պաշտպանությանը:
Նրանք երկուսն էլ միշտ եղել են առաջին գծում:

Փոխարինելու մեկնած զինվորների թվում էին Հայկ Հրանտի Վե-
յանը, Վարդան Լևոնի Գևորգյանը, Ժորա Ռուբենի Գալոյանը, Սամվել
Վազգենի Մովսիսյանը, Ստեփան Ռաֆիկի Սրկոյանը, Վլադիմիր Գրի-
գորի Կորոպկովը, Սիմոն Բորիսի Հարությունյանը, Վիտալի Գրիգորի
Տոնոյանը, Սուրեն Աղվանի Գասպարյանը, Անդրանիկ Վոլոդյայի Քո-
չարյանը, Սուրեն Ռիդի Թարվերդյանը, Կլիմենտ Սարգսի Սարիբեկ-
յանը և շատ ուրիշներ:

Այդ օրերին Մարտակերտի բարձունքներում վիրավորվեց պարե-
տային դասակի հրամանատարի ժամանակավոր պաշտոնակատար
Արայիկ Աբրահամի Հարությունյանը: Զոհվեցին Ջերմուկի կամավորա-
կան վաշտի զինվորներ Վանիկ Հադրութի Զաքարյանը և Գառնիկ
Օհանի Մանուկյանը:

Նույն օրերին մարտերի ժամանակ ընկան Երևան քաղաքի բնա-
կիչ Արմեն Ժորժիկի Թադևոսյանը, Աշտարակի շրջանի Բազմաղբյուր
գյուղից Սուրեն Էդիկի Գրիգորյանը:

Կուսապատ, Ն. Հոռաթաղ, Սարդարաշեն, Մեծ Շեն գյուղերի հա-
մար մղված մարտերում իրենց քաջությամբ աչքի ընկան և զոհվեցին
Վիկտոր Սուրենի Գիժլարյանը, Ռազմիկ Ռուբենի Թադևոսյանը, Ար-
կադի Վարդանի Մելիքյանը:

Իրենց քաջ ընկերներին փոխարինելու եկան Վազգեն Գրիշայի
Եփրեմյանը, Ալբերտ Վիլենի Հովհաննիսյանը, Վաղարշ Հրանտի
Խաչատրյանը, Օնիկ Պարգևի Ասպոյանը, որը վիրավորվեց ու հիվան-
դանոց տեղափոխվեց, Նորայր Հարությունի Պողոսյանը, Մուրադ

(«Մուրո»)-Սրմենակի Ավագյանը, Պարգև Գրիգորի Ավետիսյանը,
Աշոտ Սարուխանի Սարուխանյանը, Արթուր Քարիդոնի Բեյբությանը,
Վոլոդյա Խաչիկի Հովհաննիսյանը, Վլադիմիր Սերգեյի Բաղդասարյանը,
Կարեն Ալբերտի Մելքումյանը, Աշոտ Սամվելի Մարգարյանը, Ռուբեն
Գևորգի Համբարձումյանը, Արմեն Վարուժանի Վարդանյանը, Հրաչ
Յուրիկի Ավանեսյանը, Սրտավազդ Արամայիսի Նիկոլայանը: Ականի
պայթյունից վիրավորվեցին Վիկտոր Յակովի Մուսայելյանը, Արթուր
Կարլենի Էլդանը, Քաջիկ Փալակի Հարությունյանը, Տիգրան Ֆրունզի-
կի Չիլինգարյանը, Ռուբեն Մարզպետի Աշխարոյանը, կապի դասակից
Գեղասիա Գարեգինի Գասպարյանը, Ռուշան Գևորգի Զոբանյանը,
Դավիթ Մկրտչի Մկրտչյանը, Դիմիտրի Մաքսիմի Գազարյանը, Գա-
գիկ Արամայիսի Փարամազյանը, Հայկարամ Ավետիսի Խալաթյանը,
հետախուզության դասակի հրամանատար Արթուր Ռաֆայելի Հովհան-
նիսյանը, նույն դասակի զինվոր Կարեն Հովհաննեսի Անարոնյանը,
Սամվել Սուրենի Միսիթարյանը, Արամ Պարույրի Մկրտչյանը, Աշոտ
Միհրանի Վարդանյանը, Արսեն Ռոմիկի Մարգարյանը, Արթուր Վիլենի
Հայրապետյանը, սակրավորների դասակից հրամանատար կապիտան
Զամբուլ Ջիվանի Եփրեմյանը, նույն դասակի զինվորներ Սրա Օնիկի
Գրիգորյանը, Աշոտ Ժորայի Շահինյանը, ավտոդասակի հրամանատար
ենթասպա Ռոբերտ Դարեջանի Քոչարյանը, Կարապետ Հովսեփի Համ-
բարձյանը, Նիկոլայ Լևոնի Գրիգորյանը, Գուրգեն Վարազդատի Ղա-
զարյանը, Հակոբ Խարսիբեկի Հարությունյանը, Հայկազ Գուրգենի Հով-
սեփյանը, տնտեսական դասակի զինվոր Գրիշա Եղիշի Դավթյանը,
բուժակներ Տիգրան Գրիշայի Դավթյանը, Սարգիս Գրիգորի Ալեքսան-
յանը:

Այդ քաջ հայորդիները մի միասնական բռունցք էին դարձել և
պարտքի ամենամեծ զգացումով էին հանձնարարությունները կատա-
րում:

Նրանք բոլորն էլ կամավորներ էին. նրանցից յուրաքանչյուրի
համար հայրենիքի պաշտպանությունն ամեն ինչից վեր էր:

Այդ օրերին Կուսապատ գյուղում թշնամու արկի բեկորից մահա-
ցու վիրավորվեց մեծ հայրենասեր Սեյրան Համազասպի Խաչինյանը,
հիվանդանոցում մահացավ:

Ջերմուկի վաշտի հրամանատար Մ. Բ[illegible]յանը փոքր-ինչ ապա-
քինվելուց հետո վերադարձավ մարտադաշտ՝ իր հետ բերելով մի քանի
զինվորներ, որոնք յուրաքանչյուր առաջադրանք ամենայն պատաս-
խանատվությամբ էին կատարում:

Նրանցից հատկապես աչքի ընկան Ջեյթուն Սահակի Հակոբյանը,

Կարեն Սենիկի Խանամիրյանը, Սաշիկ Սերյոժայի Եղիազարյանը, Սամվել Ֆոլիկի Խանամիրյանը, Հրայր Նորիկի Հարությունյանը, Սուրիբեկ Վահագնի Բաբայանը, Հրայր Սենիկի Խաչատրյանը, Տիգրան Էդիկի Արշակյանը (որը հետագայում զոհվեց Հադրութի պաշտպանության ժամանակ), Նորիկ Վոլոդյայի Հախվերդյանը, Դանիել Պետրոսի Աբրահամյանը, Կարեն Շեքսպիրի Հակոբյանը, Ժիրայր Մաղլենի Սիմոնյանը, Գևորգ Շավարշի Գևորգյանը, Կամո Անուշավանի Սարգսյանը, Գրիգոր Հակոբի Օհանյանը, Գագո Լենդրուշի Օհանյանը, Համազասպ Վլադիկի Մարգարյանը, Մայիս Վաչիկի Բաբաջանյանը, Արմեն Ասքանազի Հովհաննիսյանը, Արթուր Գրիշայի Առաքելյանը, Արթուր Արոյի Հրաչյանը, Սիմոն Հովհաննիսյանը, Գվիդոն Անուշավանի Հարությունյանը, Արմեն Լուսինեի Հրաչյանը, Գագո Բագրևանի Խաչատրյանը, Հայկ Գառնիկի Հարությունյանը, Հրաչ Մելիքի Կարապետյանը (որը ևս զոհվեց Հադրութում), Վարդան Ռոմիկի Աղաջանյանը, Մհեր Վահագնի Բաբայանը, Սամվել Վորոնցովի Մինասյանը, Յուրա Ռուբենի Առաքելյանը, Աղասի Վարդանի Բաղալյանը և Սամվել Կարոյի Մարտիրոսյանը:

Վերջին երկուսը զոհվեցին Հադրութի պաշտպանության մարտերում:

Թող ընթերցողին ձանձրալի չթվա տղաներին մեկիկ-մեկիկ հիշելը. նրանցից յուրաքանչյուրը մի օջախի վառ կերոն է, մի գորովագութ մոր զավակ և վերջապես՝ հայրենիքի անձնուրաց զինվոր:

1993 թվականի մարտի 31-ին մեզ օգնության եկան նաև հակատանկային դասակի կամավոր զինվորներ, որոնց ղեկավարում էր հրամանատար լեյտենանտ Արմենակ Ազատի Վարդանյանը, որը հետագայում դարձավ գումարտակի շտաբի պետ: Մասնակցել է նաև Հադրութի ինքնապաշտպանությանը: Գերազանց էր տիրապետում տեխնիկային: Արմենակն իր քաջ զինվորների հետ պաշտպանում էր Մառուզի բարձունքների 17—18-դիրքերը: Այդ օրերին այնտեղ թշնամին կատաղի հարձակումներ էր գործում, սակայն հանդիպելով՝ ամուր դիմադրության նահանջում էր:

Զինվորներն իրենց առաջադրանքները հիմնականում լավ էին կատարում: Նրանցից հատկապես աչքի ընկան եղբայրներ Մանվել և Դավիթ Միրիջանյանները, Ալբերտ Հակոբի Միհրանյանը, Լյուդվիգ Մկրտչի Մկրտչյանը, Ռոբերտ Սերգեյի Համբարձումյանը, Ծերուն Բախշիկի Ներսիսյանը, Տիգրան Հազարավարդի Ռաֆայելյանը, Գագիկ Խոսրովի Հակոբյանը, Գրիշա Վանուշի Հովհաննիսյանը, Կարապետ Գարեգինի Վանյանը, Պավլիկ Հովհ-

Ազատամարտիկները 1993 թ. ապրիլի 24-ին Ուջան գյուղում մեր նախնիների հուշարձանի մոտ

Ասատրյան Կարեն

Շառոյան Համլետ

Մի խումբ ազատամարտիկներ

Կիրակոսյան Կարո

Դանիելյան Հայկազ

Դավթյան Հարություն

Սահակյան Նաիրա

Սահրադյան Հրաչ

Լազարյան Հրայր

Մի խումբ ազատամարտիկներ

Եդիգարյան Սահակ

Հովհաննիսյան Հենրիկ

Ստեփանյան Լիպարիտ

Վարդերիսյան Աղաս

Բաբայան Մուշեղ



Մելքոնյան Արկադի



Հարգված Տիգրանը

Մի խումբ ազատամարտիկներ

Մի խումբ ազատամարտիկներ

Մի խումբ ազատամարտիկներ

Առաջաձոր

Երեխաները գյուղում

Մանուկյան Նորիկ

Խաչատրյան Կարեն

Աբրահամյան Գառնիկ

Միքայելյան Յուրա

Ղալեջյան Ռաֆիկ

Եփրեմյան Ջամբուլ

Ազատամարտիկները 1993 թ. ապրիլի 24-ին Ուջան գյուղում
մեր նախնիների հուշարձանի մոտ

Կարապետյան Հրաչ

Հակոբջանյան Բորիս

Զաքարյան Վանո

Միրզաջանյան Մանվել

Վարդանյան Արմենակ

Ազատամարտիկները խրամատներում

Հովհաննիսյան Միսակ

Ղազարյան Սիլվա

Մի խումբ ազատամարտիկներ

Խաչինյան Սեյրան

Հովհաննիսյան Արթուր

Մարտիրոսյան Սամվել

Վարդանյան Անահիտ

Քոչարյան Ռուբիկ

Գիժլարյան Վիկտոր

Ծատուրյան Կամո

Զաքարյան Ներսես

Ղազարյան Արթուր

Կարապետյան Նորայր

Մաթևոսյան Արթուր

Սիրեկանյան Ռաֆիկ

Թադևոսյան Ռազմիկ

Դալյան Աղասի

Գրիգորյան Սուրեն

Օհանջանյան Արամ

Մանուկյան Գառնիկ

Խլղաթյան Գեղամ

Մեհրոյան Միշա

Առաքելյան Ռաֆիկ

Բալաբեկյան Կարապետ

Մակարյան Վարդան

կիմ Նշանի Խաչատրյանը, Հայկ Արտաշեսի Աղեկյանը, Սուրեն Հրաչի Հովհաննիսյանը, Վարդգես Իշխանի Բաբայանը, Աբել Գարուշի Սիմոնյանը, Արայիկ Վարդանի Դավթյանը, Սերյոժա Սուքիասի Հարությունյանը, Ռուբեն Լևոնի Տիգրանյանը:

Այստեղ անպայման պետք է հիշատակել նաև երրորդ վաշտի քաջարի հրամանատար լեյտենանտ Կարապետ Իվանի Բալաբեկյանի անունը:

Նա երկար ժամանակ եղել էր պատերազմական թոհուբոհի մեջ: Դեռևս 1988 թվականից մասնակցել էր արցախյան շարժմանը: Եղել էր Գորիսի, Խնձորուտ, Կոռնիձոր, Խոզնավար գյուղերի և Սիսիանի Դաստակերտի պաշտպանական մարտերին: 1990 թ. Կապանի, Իջևանի, Բուզուլուխի, Մանաշիդի, իսկ 1992 թվականից՝ Շահումյանի շրջանի Ղարաչինար, Մանասիշեն, Գաղթուտ գյուղերի համար մղվող մարտերի ակտիվ մասնակիցներից էր: 1993 թվականին զինվորագրվել էր նորաստեղծ ազգային բանակին: Համախմբելով 90-ից ավելի զինվորների՝ մասնակցել էր Մարտակերտի հերոսական պաշտպանությանը:

Իր տեղակալ Արմեն Ալբերտի Սարգսյանի հետ մարտեր էր մղել Ն. Հոռաթաղի, Փափրավանդի, Ասկերանի պաշտպանության ժամանակ:

Նշված գյուղերի համար անմնացորդ նվիրումով պայքարեցին Սամվել Ալոյի Հովսեփյանը, Սանասար Մանուկի Գեղամյանը, Մարգպետունի Լիպարիտի Գրիգորյանը, Ռուբեն Սարգսի Միրզոյանը, Մանուկ Աղվանի Ասոյանը, Բենիամին Արտավազդի Դանիելյանը, Մեսրոպ Անդրանիկի Մանուկյանը, Կամո Ռաֆիկի Փարյանը, Վիկտոր Շամխալի Իսունցը, Գեղամ Գառնիկի Հարությունյանը, Էդուարդ Վոլոդյայի Խրոյանը, Վրեժ Լևոնի Սարգսյանը, Էռնեստ Սուրենի Խաչատրյանը, Մնացական Ալեքսանի Հովհաննիսյանը, Արաքսյա Սերյոժայի Գալստյանը, Արա Մելիքի Դավթյանը, 2-րդ դասակի հրամանատար Յուրիկ Ապրեսի Պապյանը, Ջումշուդ Ֆյոդորի Մխիթարյանը, Վաչիկ Էդիկի Խաչատրյանը, Գուրգեն Պատվականի Պողոսյանը, Արթուր Արշավիրի Վարյանը, Էդիկ Վահանի Մելքոնյանը, Վարդան Գարեգինի Խաչատրյանը, Վարդգես Արամի Հարությունյանը, Ռազմիկ Ռուբենի Թադևոսյանը, Լավրենտ Սամսոնի Նահապետյանը, 3-րդ դասակի մարտիկ, հետագայում նույն վաշտի հրամանատար Վարդան («Ալի-Բաբա») Տաճարի Մակարյանը, Վիրաբ Ստյոպայի Սարգսյանը, Վիրաբ Յուրիկի Ներսիսյանը, Արարատ Արշակի Ասատրյանը, Գրիշա Լուկա-

շինի Մարգարյանը, Միշա Բարեղամի Գաբրիելյանը, Մանվել Հա
Զիրոյանը, Աղվան Մուշեղի Շուռոյանը, Գյումշուդ Մնացականի Բ
ռեղամյանը, Անդրանիկ Սարգսի Դավթյանը, Ալեքսան Կիմի Հար
թյունյանը, Ցական Ռաֆիկի Սարգսյանը, Սենիկ Հովհաննեսի Թ
մասյանը, Անատոլի Պատվականի Սարգսյանը և Սիմոն Հովհաննե
Թովմասյանը:

Մարտի 25-ին ականանետային և զենիթային դասակների զի
վորները վերադարձան հանգստի:

Շտաբն այդ ժամանակ գտնվում էր Կուսապատ գյուղում: Ա
ռազմադաշտից շուրջ 10 կիլոմետր հեռու էր: Այնպես որ այնքան
ապահով տեղում չէինք: Թշնամու արկերը կա՛մ գյուղում, կա՛մ մ
տակա անտառների և սարերի վրա էին պայթում:

Գյուղը հյուսիսից ու հարավից բարձունքներով էր շրջապատվա
իսկ արևելքից ու արևմուտքից բաց էր ու անտառապատ:

Գեղեցիկ էր Կուսապատի բնությունը: Ձորի միջով անցնում է
անտառներից իջնող և ստորերկրյա ջրերից գոյացած փոքրիկ գետ
Օդն այնքան մաքուր էր, որ շնչելուց չէինք կշտանում:

Մարտի 26-ին գյուղում ամեն ինչ խաղաղ էր: Հանգստացող ազա
տամարտիկները թեև իրենց առօրյա հոգսերով էին զբաղված, բայ
պատերազմն ամենուր իր մասին էր հիշեցնում:

Ժամը 15-ին շտաբում լուր տարածվեց, որ Մարտակերտի բար
ձունքներում թշնամին նորից հարձակման է անցել:

Ամեն անգամ, երբ թշնամու հերթական ոտնձգությունների մասի
էինք լսում, հոգիներս նորից ալեկոծվում էր: Ոչ մի կերպ չէինք կա
րողանում մեզ բաժին հասած դժվարությունների պատճառը հասկա
նալ: Ինչո՞ւ պետք է այսքան տառապեինք, ինչո՞ւ պետք է այսքան
շահել կյանքեր կորցնեինք...

Մեր հոգու խռովքը փոքր-ինչ մեղմելու համար շտաբի պետ
Ռ. Առաքելյանի հետ որոշեցինք գյուղի գերեզմանոց գնալ:

Ճանապարհին կանգ առանք 1941—1945 թթ. զոհված հայորդի-
ների հիշատակին կառուցված հուշարձանի մոտ, որն ասես տնքում էր
թշնամու արկերից ստացած վերքերից:

Ցավալի տեսարան էր նաև գերզմանոցում. ամենուր ջարդված ու
պղծված տապանաքարեր էին: Այստեղ էլ էր մուտք գործել անարգ
թշնամին:

Այդտեղից անցանք դեպի Մաուզի բարձունքներն, որտեղ մեր
զինվորներն էին: Նկատելով, որ բարձունք հասնելը վտանգավոր էր,

հանդիպակաց ընկուզենու տակ մի փոքր նստեցինք: Այստեղ ծնվեց
ներքոհիշյալ բանաստեղծությունը.

Կուսապատ գյուղը, քանդած ու ավեր,
Փռվել էր կանաչ բարձունքի լանջին...
Ես և ընկերս անցնում էինք լուռ
Ու նայում գյուղի փլված տներին:

Ճամփեզրին բուսած խոնարհ նոնենին,
Լուռ ու անտարբեր նայում էր ջրին.
Ջորացած նուռը, կախված ճյուղերին,
Փնտրում էր կարծես իր փրկիչներին:

Լանջի կրծքին էր կանգնած հուշարձան
Ինքնասնարվեց քաջերի անվամբ,
Ազերի թողած վերքերից էլ այն
Ողբում էր վիշտը իր ժողովրդի:

Թողած տուն ու տեղ, անտառ ու ծառեր՝
Կուսապատցին էր կարոտով այսպես
Հեռացել գյուղից վիրավոր, անտեր.
Էլ ո՞վ է տեսել այսպիսի դավեր:

Կգա արշալույս, կբացվեն ճամփեք,
Կուսապատցին էլ կունենա արև,
Հողը շունչ կառնի նրանց թևերով,
Մարդիկ հետ կգան վարդ ու ծաղիկով:

Նոր էինք պատրաստվել վերադառնալ, երբ կողքի խրամատից
25-ից 30 տարեկան երկու զինված երիտասարդ հայտնվեցին օմսնա-
կանի սև հագուստով:

Ամեն ինչ միանգամից շուտ կատարվեց, մարտի բռնվելն անի-
մաստ էր: Մի անզգույշ շարժում, և ամեն ինչ ի վնաս մեզ կավարտվեր:

Երբ հարցրեցի, թե ովքեր են, նրանցից մեկը Գյումրիի բարբա-
ռով պատասխանեց, որ Կիրովականի հետախույզներից են և իրենց
ընկերներին են փնտրում:

Առանց որևէ անակնկալի իրարից բաժանվեցինք, բայց այդպես էլ
չկարողացանք ճշտել՝ հայե՞ր էին, թե՞ թշնամու հետախույզներ:

Այդպիսի վտանգավոր միջադեպեր էլ են լինում, որոնց պետք է
միշտ պատրաստ լինել:

Մարտի 30-ին բրիգադի հրամանատարի տեղակալ Ս. Սարգսյա-
նի հետ Դրմբոն եկանք, որտեղ պաշտպանության նախարարի տեղա-
կալ Ալիկ Պետրոսյանի հետ հանդիպում ունեցանք:

Նա գումարտակի հրամանատարության աշխատանքից և զինվորների վարած մարտերից գոհ էր:

Մարտի 31-ին, ժամը 5-ին, Կուսապատից տեղափոխվեցինք Ումուդլու գումարտակի զինվորների մի մասին Մաուզի, Մեծ Շենի և Մոխրաթաղի պաշտպանական դիրքերում թողնելով:

Ապրիլի 1-ին լուր տարածվեց, որ Ավո (Մոնթե) Մելքումյանն իր գումարտակով գրավել է Քելբաջարը:

Ռ. Առաքելյանը և ես հրամանատար Ռ. Գյուլումյանի մոտ շտապեցինք, որպեսզի ստացված լուրը ճշտեինք:

Նա մեզ հանգամանորեն պատմեց Մոնթեի գումարտակի հաղթարշավի մասին:

Մարտի 27-ին նրանք երեք ուղղություններով ընդհուպ մոտեցել էին Քելբաջարին:

Մարտի 29-ին, շուրջ 10 ժամ տևած համառ մարտերից հետո, Մոնթեի գումարտակը գրավել էր թշնամու ամրությունները և հասել դեպի Լաչին տանող խճուղուն:

Ապրիլի 2-ին, հակահարված հասցնելով շրջկենտրոնում տեղակայված թշնամու տեխնիկային, վերջնականապես գրավել էին Քելբաջարը:

Դա խիստ կարևոր էր մեր հայրենիքի հյուսիսային մասն ազատագրելու համար:

Այդ հայրենանվեր գործը երևի միայն Ավոն կարող էր անել:

Քելբաջարի գրավման ուրախալի լուրն արագորեն տարածվեց ռազմաճակատով մեկ և մեծ ոգևորություն պատճառեց զինվորներին:

Ապրիլի 2-ը մեր ռազմիկների հաղթանակի օրն էր:

Սակայն մեր գումարտակի տղաների համար այդ օրն այնքան էլ ուրախ չանցավ. թշնամու փախստական խմբերը, միանալով Մարտակերտի իրենց զորամիավորման հետ, հարձակման անցան մեր դիրքերի վրա:

Նրանց հաջողվեց Մեհմանա և Մեծ Շեն գյուղերի խրամատները վերցնել:

Ապրիլի 3-ից մինչև 7-ը կորցրած դիրքերի համար մարտերը շարունակվեցին: Մեր զինվորները թշնամու ուժին և տեխնիկային ուժգին հակահարված էին հասցնում:

Մեծ Շեն գյուղը ամբողջ օրը գնդակոծման տակ էր:

Հրամանատարությունն զգաց, որ զինվորներին գյուղում պահելը կարող էր ճակատագրական լինել, որոշեց նրանց գյուղից դուրս բերել

և Մեծ Շենի ու Սարաանգի ջրամբարի արևելքում գտնվող բլրի հետևը տեղափոխել:

Այդ նույն օրը, ժամը 18-ին, տեղափոխվեցինք վրանների տակ: Մեզ հետ էր նաև Կիրովականի կամավորների գումարտակը: Իսկ մեր գումարտակի 2-րդ վաշտն Ումուդլու գյուղ տեղափոխվեց:

Ապրիլի 8-ին նորից կրակ էր տեղում Մեծ Շենի վրա: Մեր վրանի կողքով արագ սլացավ շտապօգնության մեքենան: Մի քանի րոպե հետո Ռ. Գյուլումյանը հայտնեց, որ Մեծ Շեն և Մոխրաթաղ գյուղերի բարձունքներում գտնվող մեր զինվորներից զոհեր և վիրավորներ կան:

Ես արագ դեպի Մեծ Շեն ճանապարհվեցի: Դրսում հորդառատ անձրև էր:

Գյուղում մեր զինվորներից ոչ ոք չկար: Գյուղամիջով անցնելիս տասնմեկ զինվորների հանդիպեցի, որոնք պատրաստվում էին մեր տղաներին օգնության հասնելու: Նրանք Արցախի բանակից էին, որոնց հրամանատարն էր Իլյիչը:

Նա ինձ հաղորդեց, որ տղաների վիճակը ծանր է:

Ուղղություն վերցրեցի դեպի Մոխրաթաղի բարձունքները: Հանդիպեցի առաջին վաշտի հրամանատարի տեղակալ Միսակ Հովհաննիսյանին: Սաստիկ հուզված էր և տխուր. մարտադաշտից էր եկել, որպեսզի օգնություն տաներ:

Մեզ հասան արցախցի զինվորները, որոնց հետ էլ մեկնեցի մարտադաշտ: Ծանապարհին հանդիպեցի 3-րդ վաշտի զինվոր Վարդան Գարեգինի Խաչատրյանին, որը վիրավոր Գեղամ Գառնիկի Հարությունյանին էր բերում:

Տեսարանն այնքան հուզեց ինձ, որ Գեղամին գրկեցի ու սեղմեցի կրծքիս: Զէի կարողանում արցունքներս զսպել: Գնդակն անցել էր թոքով և մեջքից դուրս եկել: Իսկ նա ընդամենը 21 տարեկան էր: Երևի նկատել էր իմ հուզմունքս, կամացուկ հանգստացրեց ու խնդրեց տղաների մոտ շուտ հասնել:

Նոր էի Վարդանից ու Գեղամից բաժանվել, երբ մեր գումարտակի զինվոր Արտավազդ Ալեքսանի Նիկոլայանին հանդիպեցի: Ինձ հայտնեց, որ զոհվածներին և վիրավորներին շտապօգնության մեքենայով դաշտային հոսպիտալ են տեղափոխել, իսկ ինքը մյուս վիրավորներին է փնտրում: Ես նույնպես միացա նրան:

Նոր էր մթնել, երբ ձորի բերանից լսվեց արցախցի զինվորի ձայնը, որը պահանջեց հարցնել մեր ո՞վ լինելը և գալու նպատակը: Պատասխանեցի, որ մեր վիրավոր տղաներին ենք փնտրում: Բայց չհավա-

տաց խոսքերիս և պատրաստվեց կրակելու: Հազիվ հասցրեցի ներկայանալ նրան: Սպասեց այնքան, մինչև Արտավազդի հետ իրեն հասանք:

Զինվորը 18-ամյա արցախցի Արմենն էր: Ասաց, որ եթե ժամանակին չներկայանայիք, ուշ կլիներ:

Այդտեղ գտանք Վիկտոր Սուրենի Գիժլարյանի, Ռազմիկ Ռուբենի Թադևոսյանի և Արկադի Վարդանի Մելիքյանի դիակները:

Ուշ երեկո էր, երբ մեր դաշտային վրանը վերադարձանք: Զինվորները շատ տխուր էին. այդ օրը զոհեր ու վիրավորներ էինք տվել:

Ապրիլի 9-ի առավոտյան հրամանատար Գյուլումյանը տեղեկացրեց, որ պատրաստեինք անձնակազմը և տեղափոխվեինք Ումուղլու:

Նույն օրը գումարտակի շտաբը տեղափոխվեց:

Ապրիլի 10-ին մեզ մոտ հյուրընկալվեցին Թալինի շրջանի մարտիկներից Լենդրուշը և Սաքոն: Ջերմուկի վաշտի հրամանատար Համո Բաբայանի տղաների և հյուրերի հետ մի փոքր երեկո կազմակերպեցինք, որի ժամանակ մեր նահատակ ընկերներին հիշեցինք:

Ապրիլի 11-ին, ինչպես և նախատեսված էր, մեր զինվորների մի մասին Երևան ուղարկեցինք, իսկ մյուս մասը պետք է ապրիլի 15-ին մեկներ:

Թիկունքում եղած ժամանակ ես հետաքրքրվում էի, թե տեղի սպաներն ու զինվորներն ինչպե՞ս են մեր զոհված ու վիրավոր մարտիկներին ընդունել:

Այդ կապակցությամբ գումարտակի շարային բաժնի պետ կապիտան Ռաֆիկ Վարդի Ղալեչյանին և տեխնիկայի ու զինանոցի գծով հրամանատարի օգնական մայոր Ռաֆիկ Ռուբենի Սիրեկանյանին դիմեցի (Վերջինս 1994 թվականի հունվարին զոհվեց Մարտակերտի սահմանամերձ գյուղերի պաշտպանության ժամանակ):

Նրանց հաղորդած տեղեկություններից պարզ դարձավ, որ մեր ընկերները թիկունքում մեծ աշխատանք էին կազմակերպել:

Հանգստյան օրերին խմբեր էինք կազմակերպում, որոնք հաճախակի այցելում էին մեր զոհված ընկերների հարազատներին ու վիրավոր մարտիկներին, լինում էին հիվանդանոցներում և փորձում ինչ-որ կերպ հոգալ նրանց կարիքները:

Այդ միջոցառումները շարունակվեցին մինչև մեր Հադրութ մեկնելը:

Դեռևս Արցախում եղած ժամանակ ուխտել էինք կենդանի մնալու դեպքում անպայման այցելել Աշնակ և Ուջան գյուղեր, որտեղ կանգնեցված էին ազգի համար մարտնչած գործիչների հուշարձանները:

1993 թ. ապրիլի 24-ին եղանք այդ գյուղերում և նահատակների հուշարձաններին թարմ ծաղիկներ դրեցինք:

Այնուհետև Թալինի շրջանի Ոսկեթաս գյուղ մեկնեցինք և եղանք Արմենակ Վարդանյանի պապի՝ Զոլոյի տանը: Այդտեղ մեր ազգի ազատության և անկախության համար նահատակված հին ու նոր անմահ զոհերին հիշեցինք:

* * *

Հետևում մնացին արցախյան հիսուն երկարաձիգ օրերը: Օրեր, որոնք լի էին հաղթանակի, ուրախության ու բերկրանքի, այո, նաև հիասթափության և ծանր ապրումների րոպեներով:

1993 թ. հունիսի 15-ին գումարտակը հանգստից հետո Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Հադրութի շրջան մեկնեց նրա ինքնապաշտպանությանը մասնակցելու:

Այդ մասին հետագայում, եթե ինձ բախտ վիճակվի գրել, հատկապես ուզում եմ գրել բրիգադի հրամանատար, ազգի Լեգենդար հերոս (ես նրան այդպես եմ բնութագրում) Մանվել Գրիգորյանի կյանքի և գործունեության մասին:

Հավերժ փառք նրանց, ովքեր այս պատմության մեջ անմահացան:

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԹԱԹՈՒԼ ԿՐՊԵՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

90 թվի սեպտեմբեր ամսին
Թաթուլ կամավոր մեկնեց Գետաշեն,
Պարեց ու երգեց, դարձավ ուսուցիչ,
Կռվեց մարտերում քանց քաջ ֆիդայի:

Կարոտ գնացիր լույսից, մեծ հույսից,
Ճամփեք բացեցիր, բայց դու հեռացար,
Ճակատագիրն էր այդպես Թաթուլի,
Ողջ չվերադառնալ հողը հայրենի:

Երկար ժամանակ նա մարտեր մղեց
Ու Գետաշենում առողջ սերմ ցանեց,
Ճակատագիրն էր այդպես Թաթուլի,
Որ չտեսներ նա լույսը գալիքի:

Հողին հանձնեցինք Թաթուլին անմահ,
Հուշարձան կանգնեց նրա շիրիմին,
Ճակատագիրն էր մեր քաջ Թաթուլի՝
Որ ապրեց մեր մեջ, որպես ֆիդայի:

ՆՎԻՐՈՒՄ ԵՄ ԶՈՐԱՎԱՐ ՄԱՆՎԵԼ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ

Քանի անգամ արկն է թևել քո առջև,
Քանի անգամ արկից առաջ դու ես թևել թռիչքով,
Քանի անգամ մահն է եկել չոքել կրծքիդ հևիհև
Քանի անգամ խույս ես տվել ու պաշտպանվել թևերով,
Բազկիդ ուժի, մտքիդ կտրուկ զորությամբ,
Պաշտպանում ես հայրենիքդ ամենուր
Ուժ ես տալիս քո զորքերին աստվածային վեհությամբ
Հոգուդ լույսը ներշնչում ես քո զորքերին հավատանք:
Վեցը տարի դու քո կյանքը նվիրեցիր Արցախին
Մանուկ ու ծեր դու փրկեցիր գաղթի դժբախտ ճամփեքից
Էդիլույի բարձունքներում դու պահեցիր քո ազգին
Սարուշենից ճամփա բացիր ու փարվեցիր Արաքսին:

Քո մի ոտքդ Հադրութի բարձունքների գագաթին,
Մյուս ոտքդ պահապանն է Մարտակերտի լեռներին:
Երբ պիտի դու հոգով ճախրես, քո երազած Արցախի
Կարոտն առնես վերադառնաս սուրբ տունը քո հայրենի:
Զուր չեն պատմում արկածները անցկացրած օրերի,
Որ փշրել ու հետապնդել ես մեծ բանակի զորքերին
Մարտիկներիդ հզոր ուժով դու սարերն ես բարձրացել
Մինչև հիմա պայքարում ես ու տուն կանչում շատերին:
Արջը իրեն քոթոթներով անունդ կնքեց թշնամին
Քո զարգանդից սարսափ ապրեց արյունախում ազերին
Քանի անգամ գլխիդ համար գին խոստացավ զորքերին,
Քանի անգամ նա պարտվեց անմիջապես քեզանից:
Մեր վարդանն ես ու Դավիթը այս դարի
Դու իմ ազգի սուրբ զավակն ես ու արի
Քո անունը պետք է գրվի նուրբ ու շքեղ տառերով,
Պատմությունդ դարեր կապրի քո երազած աշխարհում:
Ես հույս ունեմ, որ դու կապրես հայրենիքումդ հավերժ,
Երկիրը քո դու չես թողնի, որ այն մնա անավարտ:
Հավատում եմ Արագածից դու կհասնես Մուսալեռ,
Եվ Մասիսից ցած կբերես Բիբլիական աղբյուրներ
Դրանից հետո հանգիստ կառնես Արագածի սեգ լանջին:
Սիրով կանչես ու տուն բերես մեր դեգերող հայերին,
Այնուհետև նավակների նման դու էլ ծովերի վրա կբայլես
Հավերժության պատմության մեջ ես էլ քեզ հետ կասահեմ:

ԿԱՄԱՎՈՐՆԵՐԻՆ

Դուք կամավորներ, ազգիս փրկիչներ,
Մեր ժողովրդի ազնիվ զավակներ,
Ելաք խմբերով ու շարք կանգնեցիք,
Արցախ աշխարհը ոտքի հանեցիք:

Դուք ազատության անմահ հերոսներ,
Թևածեցիք վեր, դեպի սեգ լեռներ,
Անցաք արցախյան հողի վրայով,
Ու կռիվ տվիք կամքով կամավոր:

Ձեր սերունդները թող լավ իմանան,
Որ ձեր արյունով ներկվեց հողը հին,
Ազատագրեցիք լեռներն Արցախի,
Որ ապրեք անկախ, ազատ ու հպարտ:

ԸՆԿԵՐՆԵՐԻՍ

Ո՞ւր են ընկերներս հիմա, այս ժամին,
Ո՞ր սարի տակ են կամ ո՞ր դիրքերում,
Գուցե հիմա էլ, այս ներկա ժամին,
Նրանք իրարու մարտի են կանչում:

Քունս չի տանում, շատ եմ անհանգիստ,
Ո՞վ է նրանցից պառկել վիրավոր,
Գուցե զոհվել է, արյուն է հոսում.
Գուշակությունս հանգիստ չի թողնում:

Գետնափորի մեջ կրա՞կ են վառել,
Հավաքված շուրջը հուշերով միշտ թարմ,
Կամ էլ ընկերոջ սիրանքն են գովում,
Թշնամու արկից իջած գերեզման:

Առողջ տուն դարձեք դուք իմ հերոսներ,
Մենք ձեզ ենք սպասում, ձեր հաղթանակին,
Որ մտնեմ ժամը ու մոմեր վառեմ,
Ձեր վերադարձին մատաղս կտրեմ:

* * *

Առյուծ մարտիկներ, դուք չեք դիմանում,
Երբ ընկերները ընկնում են մարտում,
Կրակոտ կրքով սարերն եք ելնում,
Սրի շաչյունով սրտեր թունդ հանում:

Աստված ձեր բազկին թող էլի ուժ տա,
Առաջ շարժվեցեք, քանի դեռ տեղ կա,
Հաղթական ոգով տուն վերադարձեք,
Զենքը վայր դրեք ու հանգստացեք:

Այնժամ ես կասեմ՝ դուք հավերժացաք,
Որ ձեր սրի դեմ թշնամին դողաց,
Կգա ժամանակ, ու դուք կմնաք
Մեր ժողովրդին որպես սուրբ ճրագ:

* * *

Պարզկա գիշեր էր աշունքվա
Մարում էին շողերը վերջին.
Խարույկները թանձրանում էին.
Մշուշ էր պատում սարերին:

Ցոլում էին աստղերը վիրավոր.
Մարում էր լուսինը հիվանդ.
Խավարում զինվորը տխուր
Երգեր էր երգում հինավուրց:

* * *

Նվիրում եմ հոգուդ լույսին
Այս խաչքարը, իմ ընկեր,
Այն թող լինի մեր հուշերի
Հուշարձանը, սուրբ ընկեր:

Այսուհետև քո շիրիմին
Բյուր ծաղիկներ թող ծաղկեն,
Ես էլ կգամ ջուր կլցնեմ
Ծաղկանոցիդ, իմ ընկեր:

* * *

Լիալուսին գիշերն եկավ,
Տղերքն իրար ձեռ տվին,
Նրանք ինձ մոտ այցի եկան
Ցուրտ աշունքվա գիշերին:

Այդ օրն ամպերն երամ կապած,
Լուսնին մեղմիկ փարվելով,
Ուղտերի պես անցան կամաց՝
Փայլող աստղին ցույց տալով:

Տղերքի հետ հանգստացա
Քամին մեզ մեղմ կշոյեր:
Սառած գիշեր՝ ցուրտ աշունքվա
Հոգիս ինձ լուռ կտանջեր:

Տղերքն ընկան անուշ քնով,
Հանգիստ առան դիրքերում:
Պարզ գիշերին ես կարոտով
Հուշերս էի ամփոփում:

Թող տա Աստված՝ լույսը բացվի
Ձեր բոլորի շեներում,
Եվ այդ լույսով թող լույս վառվի
Ժողովրդիս սրտերում:

ԳԵՏԱԿ

Ի՞նչ ես լալիս, վճիտ գետակ,
Ջուր ես թախծոտ գալարվում,
Չլինի՞ թե վիշտդ անտակ
Նորից-նորից է խորանում:

Հոգս մի՛ արա, ժամն է եկել,
Դու քո ճամփան կփոխես,
Ինչ որ այդքան երազել ես,
Շուտով, շատ շուտ կտեսնես:

Դառը տանջանքդ հոգսերով
Քո ցավի հետ միասին
Կանցնեն կերթան Վանա լճով
Դեպի ծովը Տիգրանի:

Դու լուսինն ես ժողովրդիս,
Որ դարերի ընթացքում
Մոլորվել ես մինչև օրս
Սպասումիդ ճամփեքում:

* * *

Իմ երգը նոր է
Ու դեռ մարտնչող:
Քնարս լույս է,
Կյանքը՝ ոսկեշող:

Երգերս ինչպես
Փոքրիկ գոհարներ
Թող սուրան պայծառ
Աստղերից աստղեր:

* * *

Որքան հանգիստ է սավառնել երեր,
Մնալ մեն մենակ հավերժության մեջ,
Անցնել բյուրավոր աստղերից աստղեր
Եվ հասնել մինչև արևին անշեջ:

Ինչպես հասկանալ լեզուն աստղերի,
Որոնել մենակ մի երազ աշխարհ:
Ինչպես վերանալ մոռանալ կյանքի
Բյուրեղ ընթացքը գետի պես վարար:

Չեմ կարող զատվել ես մի պահ անգամ,
Անցնել տիեզերք, աստղերից աստղեր,
Ինչպես հեռանալ ծովից խելագար,
Մոռանալ, որ կա և՛ պայքար, և՛ սեր:

* * *

Վեց գարուններ և վեցը ձմեռ
Եկան ու անցան դառնությամբ լեցուն,
Վեց գարուններ և վեցը ձմեռ
Ցավ ու հոգսերով դեռ կապրեն դարեր:

Այդ տարիներին կռունկներն անցան
Թախծոտ երգերով մեծ կոմիտասյան:
Ե՞րբ պիտի նրանք ուրախ երգերով
Անցնեն ու գնան Արցախ աշխարհով:

Տեսնես կտեսնե՞մ իմ հայրենիքը
Ազատ ու հզոր՝ այս մոլորակում,
Տեսնես իմ հոգին կառնի՞ հանգիստը
Այսքան բզկտված մեր ազնիվ երկրում:

* * *

Անցավ գարուն, անցան ծաղկունք,
Անցան բոլորն, ինչ-որ կար,
Խնդությունս դարձավ մի սուգ,
Եվ տխրություն և խավար:

Ո՞ւր է հովիտը ծաղկավետ,
Ո՞ւր են փնջերս հյուսած,
Միթե՞ կորան անդարձ, հավետ,
Ինձ մնացին սուգ ու լաց:

* * *

Ծովում ուրախ արևներ կան,
Ծովը՝ կյանքի խնդություն,
Ծովը՝ ճամփա, իսկ մենք ճամփորդ
Անցնում ենք ու վերջ չկա:

Ու դեռ կանցնեն նոր սերունդներ,
Կանցնեն ծովով հարազատ,
Ծովն էլ նորից կժպտա խոր,
Ամեն կյանքի կրծքի տակ:

* * *

Ինչե՞ր են սպասում ինձ հիմա,
Ո՞ւր պետք է գնամ ես միայնակ,
Ոչինչ եմ, չնչին եմ, չկամ,
Հույզերս հեքիաթ են բոլոր:

Էլ չեմ դիմանում, նայում եմ շուրջս,
Պատերազմ միայն խոովքներ հոգու,
Մարդիկ ապրում են իրարից հեռու,
Էլ չեմ հանդգնում խոսել նրանց հետ:

* * *

Սևանը ծփում է գույնով կապուտակ.
Անկեղծ ու անբիծ սիրտս մանկական,
Ընկած ծովի մեջ բարկ արևի տակ,
Լողում է գրկում հավիտենության:

* * *

Շուրջս գարուն է նորից,
Շուրջս ծաղիկ ու ծառեր,
Շուրջս մայիս է նորից,
Շուրջս տխուր ու վերքեր:

Շուրջս աստղեր են խավար,
Շուրջս կռիվ ու պայքար,
Շուրջս արյուն է հոսում,
Շուրջս ավեր անդադար:

* * *

Դեռ որքան ռումբեր պիտի տեղան,
Ու քանդեն աշխարհը հիմքից,
Բոլորը ոչինչ են, չկան,
Բայց նորից հեքիաթներ կհյուսվեն:

ՄԱՍԻՍԻՆ

Լացել ես, լալիս ես նորից,
Ողբում ես ցավերը քո հին,
Սրտումդ այրող մի կսկիծ՝
Հեքիաթիդ ասպետը չկա:

Գլուխդ հենած աստղերին,
Կուրծքդ արևի դիմաց,
Գրկել ես երկիր Նաիրին,
Դարձել ես օրրան մի հարբած:

* * *

Միշտ ամուր մնաս,
Արցախ իմ լուսե,
Քայլդ հնչի պարզ,
Ղողանջում ու վեհ:

Կամքդ թող լինի
Պողպատից ամուր,
Չշեղվես երբեք
Կյանքից ամենուր:

* * *

Բորբ արևը երբ ծագեց,
Այն առավոտ ծնվեցի,
Հայրենիքս ինձ կանչեց
Արշալույսին մեր կյանքի:

Երբ ծածանվեց կամարում
Եռագույնը մեր երկրի
Հայաստանից մինչ Արցախ
Դարձավ ամուր մի աշխարհ:

Ջերմ արևի լույսի տակ
Օրեր կապրենք խնդության
Մենք ուժ կառնենք ու հասակ
Հայրենիքում մեր արձակ:

* * *

Ընկերս հիմա դու ես դարձել,
Հույզերով լի իմ գրիչ,
Այնպես եղիր դու մարտերում,
Որ ես դառնամ մեծ երգիչ:

Դարձիր սրտիս հավատարիմ,
Գրիր տողեր ոսկեշար,
Իմ սիրելի հայրենիքում
Երգեմ անվերջ, անդադար:

* * *

Թե ունենայի սիրտն Անդրանիկի,
Նրա պես դաժան թշնամուս հանդեպ,
Էլ չէր մոլորվի ճամփան իմ նավի,
Փոթորիկներում երբեք ու երբեք:

Գեթ ունենայի ես էլ անեղ սուր,
Որ կտրեր ամեն բռնության կապանք,
Չէի թողնի տունս մոռացված, թափուր
Սեր կափուեի աշխարհին հանուր:

* * *

Նստել եմ ձորի քարքարոտ եզրին,
Նայում եմ հեռու լեռնոտ ափերին,
Ու մտածում եմ, թե ինչպես ազգս,
Պետք է տեր դառնա այդ բարձունքներին:

Իմ ժողովուրդը արհավիրքներում շատ բան է տեսել,
Ելել բարձունքներ ու վայր է իջել,
Բայց երբևիցե նա չի կործանվել,
Բազեների պես վեր է խոյացել:

Պայքարն է բերել մեզ միշտ հաղթանակ:
Կռվել, մաքառել, առել ենք նոր թափ,
Խելքով ու մտքով եղել ենք լեցուն,
Ու պիտի հասնենք իղձերին մեր սուրբ:

* * *

Ե՞րբ պիտի դադարեն կրակոցները,
Տուն վերադառնան մեր հերոսները,
Կառուցվող երկիրս իր հունը գտնի,
Արցախն էլ ազատ իր շունչը քաշի:
Կատարված լինի սրտիս բաղձանքը,
Բայց դա կկազմի հիսուն տոկոսը.
Կբացեմ դուռս, Աստծուն կաղաչեմ,
Գիրկս կկանչեմ Սիսն ու Մասիսը
Եվ այնուհետև՝ Մուշն ու Սասունը:
Գնամ ու մտնեմ իմ պապիս տունը,
Զոքեմ, համբուրեմ ոտքի հետքերը,
Որ թողել են տատս ու պապս:
Հանեմ այնտեղից օթախում պահված
Սուրբ Նարեկացին, Ավետարանը,
Ու նրանց պատվին վառեմ մոմերը,
Հավիտյան դառնամ ժառանգության տեր:
Մասսի բարձունքից նայեմ Մուսալեռը,
Որ շրջապատել են շուն ասկյարները:
Բռնենք քոչարին, պարենք մեր պարը
Արթնացնենք բոլոր անմեղ զոհերին:
Դուրս հանեմ հողից հայրենի սուրը
Ամրացնեմ նրան եռագույն դրոշ
Պետական նշանն առնեմ թևերիս,
Թռչեմ ու գնամ հեռու երկրներ,
Կանչեմ տուն բերեմ մեր եղբայրներին,
Կառուցենք շեներ ու մեծ քաղաքներ:
Որդիքս հետ դառնան պատերազմներից
Հարսներ դարձնենք կույս աղջիկներին,
Որ շուտ հասցնեն ունենանք թոռներ,
Թոռնիրը վառենք թխենք լավաշներ,
Խորոված եփենք, խմենք մեր գինին

Այս անգամ պարենք Սասնա Ցարխուշտին:
Դոփենք ոտքներս, թող փոշին ելնի,
Իմ ժողովրդի աչքը լույս լինի,
Ծերերը Աստծու տվածով ապրեն,
Ամուսինները իրար գուրգուրեն,
Ճամփեքը բացվեն հույս հավատամքի:
Քրիստոսը թող դատաստան իջնի՝
Իր սուրբ թևերով մեզ միշտ հով անի:
Ծովերը թող գան իրար մոտենան,
Ցավ ու դարդերը մենք էլ մոռանանք.
Բնությունը իր հունով ընթանա
Ծառերը ծաղկեն, ու առատ բերք տան,
Լեռներից հոսեն կարկաչող գետեր,
Դաշտերում ծաղկեն շատ-շատ ծաղիկներ,
Ձմեռ ու գարուն միշտ կանաչ հագնեն:
Գյուղերը գյուղերից էլ չհեռանան,
Մարդիկ լավ ապրեն, պանդուխտ չդառնան,
Բոլորս էլ սիրենք մեկս մյուսին
Հավատարիմ մնանք մենք էլ մեր խղճին,
Չդավենք թույլին, ուտենք միասին
Եվ հանգստանանք Սև ծովի ափին:
Դրսում ձմռանը չմրսեն մարդիկ,
Փողոցում քաղցած շներ չլինեն,
Մեկը մյուսին էլ չհոշոտեն,
Փափուկ աթոռներ թող չորոնեն:
Եկել-հասել ենք բարգավաճմանը,
Ապրենք համերաշխ առանց մարտերի,
Ամեն մեկը թող իրենը վայելի,
Ուրիշի քրտնքին էլ աչք չդնի:
Թող լավ իմանան մարդիկ ագահ
Սրանից դենը մի աշխարհ էլ դեռ կա:
Այս է բաղձանքս, ի կատար ածվի
Միայն թե ոչ մի ազգ էլ չկլանվի
Հորձանուտներում այս ալեկոծված:

ՄԱՅՐԸ

Լացում ու գոռում, կուրծքն էր ծվատում
Մի խեղճ գեղջկուհի Էդիլու գյուղից,
Ի՞նչ էր պատահել, այդ ի՞նչ էր եղել:
Ասացին նրա որդին էր զոհվել:
Մենք մասնակցեցինք քաջի թաղմանը,
Ջահելը ասես խոր քուն էր մտել,
Մայրը լալիս էր, անվերջ կրկնում.
— Ես էլ ում համար ապրեմ այս հողում:

Յոթ օր ականջիս ձայներ էին գալիս,
Դա սգավոր մոր սիրտն էր հեկեկում:
Յոթ օրից հետո տեսա ես մորը.
Սև շորը հագին, ուսին՝ ավտոմատ:

Մոտեցա նրան, զարմացած հարցրի.
— Դու մայրիկը չե՞ս զոհված զինվորի:
— Այո, մայրիկն եմ, գնում եմ մարտի,
Վրեժը լուծեմ քնքուշ զավակիս:

ՄԱՍԻՍԻՆ

Գարնան անուշ եղանակին,
Աչքս ընկավ Մասիս սարին,
Արևը վերից ճառագայթեց,
Նրա ճերմակ գագաթին:

Այնտեղ տեսա երազներս,
Ուր ճախրում է իմ հոգին,
Նրա հետ է երազանքս.
Ներքուստ լացեց իմ հոգին:

Տեսիլքներ են քո լեռները,
Մաքուր, զուլալ աղբյուրներ,
Մրմնջում են անհույս կարոտ,
Լանջիդ փռված քարերին:

* * *

Ամպեր եկան, օրը մթնեց,
Պատեց արոտ ու անտառ,
Բնությունն էր ինձ կախարդել,
Ու մնացի լեռան տակ:

Ոչ ոք չկար, ես ու քարը
Շշնջացինք իրար հետ,
Ես ողբացի նրա ցավը,
Բայց նա լռեց անտարբեր:

Մենք պինդ գրկած քար ենք եղել,
Եկել, դարեր ենք անցել,
Քարի պես ենք մենք դիմացել,
Եվ պիտ ապրենք նոր դարեր:

ՄՈՐՍ ՀՈՒՇԵՐԻՑ

Ծնողիս աչքերից թափված արցունքը
Ես չեմ մոռանա մինչ մահ գերեզման,
Քանի իմ երակում կա կաթիլ արյուն,
Ես պիտի ողբամ անցյալը նրա:
Նստած ծիրանի հսկա ծառի տակ՝
Երգում էր մայրս երգն Արաքոյի,
Ես չընդհատեցի, իսկ նա շարունակ
Լացով երգում էր երգը:
Այնքան անուշ էր ու քաղցր ձայնը՝
Փոթորկեց հոգիս ու տարավ անդունդ:
Մայրս լալիս էր ես էլ նրա հետ.
Գրկել կուզեի նրան առհավետ:
Գլուխս դրել նրա ծնկներին,

Ծոյում էր մայրս գլխիս մազերը,
Արցունքներն էին թափված երեսիս,
Այդ օրվանից ես հոգով փոխվեցի:
Սրբեց մայրիկը իր արցունքները
Մի հին, քրքրված լաթի կտորով:
Նրա կարոտը խորունկ զգալով՝
Հարց տվի մորս՝ Ո՞վ էր Արաքոն:
Մայրիկս ձեռքը բերանին դրեց
Եվ զգուշությամբ նայեց իր շուրջը.
— Է, տղաս, — ասաց, — Ինձ մի չարչարի,
Իզուր հարցերով դու ինձ մի տանջի:
Բայց ես անհամբեր նորից հարց տվի,
— Ո՞վ է Արաքոն, ճիշտն ասա մայրիկ:
Մայրիկս նայեց խեղճացած դեմքիս,
Կամաց շշնջաց. «Եղել է քեռիտ»:
— Այսինքն տատիս եղբայրն է եղել:
— Այո, զավակս եղբայրը տատիդ
Բայց դու այդ մասին ոչ ոքի չասես,
Թե չէ հորդ պես քեզ էլ կաքսորեն:
— Իսկ հետո, մայրիկ, ինչ եղավ քեռին
— Իսկ հետո որդիս, գլուխը կտրին տվին թուրքերին
— Իսկ ով է կտրել գլուխը քեռու:
— Մի հայ դավաճան, սիրելի որդիս:
Աշխարհը հայոց այդ օրը թնդաց
Առյուծի գլուխն ընկավ ոտնատակ:
Դրանից հետո ծնվեցին քաջեր
Անուն առ անուն հիմա քեզ կասեմ.
Եկան Անդրանիկ, Սերոբ ու Գևորգ,
Մուրադ ու Մանուկ, Իսրո ու Կարո,
Դուման ու դժոխք, Դրո ու Սաքո,
Քեռի ու Մուշեղ, Սմբատ ու Զորո...
Շատերը եկան թնդած աշխարհով,
Հայոց աշխարհում մեծ կռիվ եղավ
Իջավ սասունցին հայոց լեռներից

Մուշից, Զեյթունից, Վանից, Իգդիրից:
Էլ Մուսալեռից, Կարինից, Կարսից...
Ժողվեցան հայոց քաջերը շարժվեցին առաջ,
Դուրս եկան տնից, սարում քնեցին
Երկար ժամանակ պատերազմ տվին:
Սուլթանը գահից հրաման տվեց՝
Կոտորել հային մինչև վերջին մարդ
Երկրի երեսից ընդմիշտ վերանան:
Սկսվեց գաղթն ու կոտորածը.
Էրգիրը թողինք, սարեր բարձրացանք.
Մշո դաշտով մեկ դիակներ լցվան
Վայրի գազաններ գյուղերը իջան:
Թուրքը թալանեց եղածն էլ տարավ:
Ինչ որ ունեինք կաշառք տվեցինք,
Թուրք ասկյարների ձեռքից փրկվեցինք.
Սովից ու տիֆից շատ մարդիկ մեռան,
Տնավեր եղանք, թափառեցինք շատ,
Ութ հարյուր հազար Դեր-Զոր քշվեցան,
Մի մասը Եփրատ գետը խեղդվեցան,
Ջահել աղջիկներին ասկյարներ տարան,
...Ֆիդայիներից շատերը չքնան.
Սողոն սպանեց Դաժան Թալեաթին,
Ալի Մանուկը՝ Էնվեր փաշային,
Թիֆլիսում սատկեց վախկոտ Ջեմալը:
...Մենք եկանք մի օր հետ դառնանք Էրգիր,
Բայց ո՞վ կթողներ, մնացինք անտեր
Սովետն էլ իր տեղ սև գործն իր արեց:
Երեսունչորսը, Գերմանու կռիվն...
Գնաց իր որդին ու էլ հետ չեկավ,
Կարծես ամեն ինչ նորից վերջ գտավ:
Մնացել եք դուք, ինչպես պիտ պատժեք,
Ձեր ճակատագիրը դուք տնօրինեք.
Եղեք միակամ, դարձեք մի բռունցք,

Սիրեք շատ իրար, ապրեք համերաշխ,
Որ այսուհետև ոչ մի թշնամի
Ձեր Էրգրի վրա էլ ոտ չդնի:
Այս խորհուրդները նա ինձ կտակեց.
— Մեծանաս, որդիս, ճամփեքը բացվեն,
Ինձ տեղափոխես Մշո քրդագոմ,
Որտեղ հանգչում են ապ ու պապերս,
Հանգիստ վայելեմ ժառանգած հողս:
Էլ՞ ինչ իմանար իմ խեղճ մայրիկը,
Որ որդին հիմա ֆիդային դարձած
Արցախ աշխարհին թևանցուկ արած:
Տուն կգա մի օր երդում կատարած:
Ու աղոթքներով կմտնի ժամեր,
Աղոթքդ կկարդա, կասի իր «Հայր մեր»...
Անցել են օրեր, երկար տարիներ
Ձրուցը մայրիկիս ես չեմ մոռացել:
— Դե քունդ անուշ, իմ քնքուշ մայրիկ
Եվ դուք տարաբախտ մայրեր ու հայրեր,
Որ միշտ տենչացիք ու երազեցիք
Ազատ ու անկախ տեսնել «Մեր Էրգիր»:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

50 օր Արցախում 3

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թաթուլ Կրպեյանի հիշատակին 43
Նվիրում եմ զորավար Մանվել Գրիգորյանին 43
Կամավորներին 45
Ընկերներիս 45
Առյուծ մարտիկներ, դուք 46
Պարզկա գիշեր էր աշունքվա 46
Նվիրում եմ հոգուդ լույսին 47
Լիալուսին գիշերն եկավ 47
Գետակ 48
Իմ երգը նոր է 48
Որքան հանգիստ է սավառնել 49
Վեց գարուններ և վեցը ձմեռ 49
Անցավ գարուն 50
Ծովում ուրախ արևներ կան 50
Ինչե՞ր են սպասում 51
Սևանը ծփում է 51
Շուրջս գարուն է նորից 51
Դեռ որքան ռումբեր պիտի 52
Մասիսին 52
Միշտ ամուր մնաս 52
Բորբ արևը երբ ծագեց 53
Ընկերս հիմա դու ես 53
Թե ուներևայի սիրտն Անդրանիկի 54
Նստել եմ ձորի քարքարոտ եզրին 54
Երբ պիտի դադարեն կրակոցները 55
Մայրը 57
Մասիսին 57
Ամպեր ելան 58
Մորս հուշերից 58

ԱԼԲԵՐՏ (ՀԱՅՐԻԿ) ՂԱԶԱՐՅԱՆ

50 ՕՐ ԱՐՑԱԽՈՒՄ

Խմբագիր՝ Ա. Մ. ԲԼԲՈՒԼՅԱՆ
Նկարիչ՝ Գ. Մ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Տեխ. խմբագիր՝ Մ. Պ. ՍԱՐԳՍՅԱՆ
Վերաս. սրբագրիչ՝ Ռ. Մ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ



Ալբերտ (Հայրիկ) Ղազարյանը ծնվել է 1933 թվականին Թալինի շրջանի Մաստարա գյուղում: Միջնակարգն ավարտելուց հետո սովորել է Քիշինևի համալսարանում և ստացել իրավաբանական բարձրագույն կրթություն: Աշխատել է Ներքին գործերի նախարարության համակարգում: 1988 թվականից ներգրավվելով պայքարի մեջ, իր ողջ գործունեությունը նվիրել է Արցախի ինքնապաշտպանությանը, մարտնչել հանուն արցախահայության անկախության իրավունքի և հայ ժողովրդի արդար պահանջատիրության:

«50 օր Արցախում» վավերագիրքը հեղինակի հիշողություններն են հանուն հայրենիքի մարտնչող կամավոր մարտիկների ամենօրյա հերոսական կյանքի մասին:

Ալբերտ Ղազարյանը Արցախի հարցի, հայրենիքի մասին իր մտքերն ու մտորումները շարադրել է նաև բանաստեղծական խոսքով: Դրանք նվիրված են Արցախում զոհված ազատամարտիկների անմահ հիշատակին և փառաբանում են արցախահայության անզիջում ազգային-ազատագրական պայքարը և անվերապահորեն հաստատում այդ պայքարում հայ ժողովրդի հաղթանակի անխուսափելիությունը: